

Սերժ Սարգսեան Զրաժարեցաւ, Սակայն Ժողովրդային Յեղափոխութիւնը Կը Շարունակուի Զանրապետականները Կը Փորձեն Պահպանել Իշխանութիւնը



Յեղափոխութեան առաջնորդ՝ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Ապրիլ 25-ի հանրահաւաքի ընթացքին



Երեւանի հանրապետութեան հրապարակը վերջին օրերուն տեղի ունեցած հանրահաւաքներէն մէկուն ընթացքին

Հայաստանի մէջ ծաւալուած ժողովրդային անհնազանդութեան եւ խաղաղ յեղափոխութիւնը, որ կը գլխաւորուի Նիկո Փաշինեանի կողմ կը շարունակուի, հակառակ վարչապետ Սերժ Սարգսեանի պաշտօնէն հրաժարումին:

Ապրիլ 25-ին նախատեսուած բանակցութիւնները՝ Փաշինեանի եւ վարչապետի պաշտօնակա-

տար կարէն կարապետեանի միջեւ չնշուեցան այս վերջին կողմէ, առարկելով որ, նախապայմաներով բանակցութիւնները անընդունելի են:

Կարապետեանի այս քայլին պատասխանելով, Փաշինեան յայտարարեց որ Սերժ Սարգսեանի հրաժարականը օգտագործելով ան կը փորձէ պահպանել իշխանու-

թիւնը: Ան կոչ ըրաւ ժողովուրդին՝ դարձեալ իջնելու հրապարակ եւ շարունակելու պայքարը, հասնելու համար իսկական իշխանափոխութեան:

Ապրիլ 25-ին, «Հանրապետութեան» հրապարակին վրայ տեղի ունեցած բազմահազարանոց հանրահաւաքի ընթացքին Նիկոլ Փաշինեան գուշացուց կարէն կա-

րապետեանին որ իր լիազօրութիւններէն դուրս չգալ, քանի որ կառավարութիւնը հրաժարած կառավարութիւն է:

«Այս շնչում նստած ոմանք մտածում էին, թէ ժողովուրդն այնքան զարմացած ու բաւարարուած է Սերժ Սարգսեանի հրաժար-

Շար.ը էջ 5

ՍԴՅԿ Զերթական Յայտարարութիւնը

Ապրիլի 24-ին ՍԴՅԿ Զայաստանի վարչութիւնը հանդէս եկան որ յայտարարութեամբ՝ պահանջելով վարչապետի պաշտօնակատար կարէն կարապետեանի հտաժարականը:

Յայտարարութեան մէջ ըսուած է.

Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան կուսակցութիւնը, համաժողովրդական շարժման առաջին իսկ օրերից լինելով ընդվզող քաղաքացիների շարքերում, կոչ է անում ԶԶ վարչապետի ժամանակաւոր պաշտօնակատար կարէն կարապետեանին վայր դնել լիազօրութիւններն ու խորհրդարանի քաղաքական մեծամասնութեանը պարտադրել ընտրել ժողովրդի թեկնածուին իբրեւ ժամանակաւոր կառավարութեան ղեկավար: Մնացեալ բոլոր քայլերը կարող են հանգեցնել անվերադարձ եւ վտանգաւոր հետեւանքների:

Մինչ երկրում քաղաքական ճգնաժամի վերջնական հանգուցալուծումը, Զնչակեան կուսակցութիւնը շարունակելու է մնալ ընդվզող մեր հայրենակիցների շարքերում:

ՍԴՅԿ Զայաստանի
 վարչութիւն

Զայութիւնը Ամենուրեք Նշեց Յեղասպանութեան 103-Ամեակը Լոս Անճելըսի Մէջ 40 Զազար Զայեր Մասնակցեցան Քայլարշաւին եւ Զաւաքին

Հայոց եղեռնի 103-րդ ամեակի առթիւ Հայաստանի գործող իշխանութեան ներկայացուցիչները գլխաւորութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.Ի, ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանի, վարչապետի պաշտօնակատար կարէն կարապետեանի, ինչպէս նաեւ հանրապետական պատգամաւորներու եւ նախարարներու բարձրացան Ծիծեռնակաբերդ:

Յուշահամալիր եկած էր նաեւ հայկական 2-րդ պետութեան՝ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանը:

Յեղասպանութեան յուշահամալիր ԱԳ նախարարի պաշտօնակատար Էտուարտ Նալպանտեանի հետ այցելեցին նաեւ Հայաստանի մէջ դիւանագիտական առաքելութիւն իրականացնող դեսպանները:

Օրուայ ամբողջ ընթացքին նախորդ տարիներէն աւելի մեծ թիւով ժողովուրդ կը ժամանէր Ծիծեռնակաբերդի բարձունքը:

Կէսերէն ետք մեծ խումբով յուշարձանին այցելեց նաեւ ժողովրդային յեղափոխութեան առաջնորդ՝ Նիկոլ Փաշինեանը:

Ապրիլ 24-ին Լոս Անճելըսի հայութիւնը դարձեալ կազմակերպեց Արդարութեան Քայլարշաւ՝



Բազմահազար հայեր կը քալեն Լոս Անճելըսի փողոցներուն վրայ

դէպի Թրքական հիւպատոսարան եւ ապա քաղաքական հաւաք, աւելի քան 40,000 Հոգիի Մասնակցութեամբ:

Համագաղութային մարմինի կազմակերպած քայլարշաւին եւ հաւաքին մասնակցեցան ու ելոյթներ ունեցան, Գոնկրէսական Ատամ Շիֆֆ, Քալիֆորնիոյ փոխ կառավարիչ Կէվին Նիւսթըմ, Լոս Անճելըսի քաղաքապետ Էրիք Կարսէթի,

Քալիֆորնիոյ Խորհրդարանի խօսնակ Քէվլըն Տէ Լիոն եւ ուրիշներ:

Բոլոր ելոյթ ունեցողները պահանջեցին Թուրքիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը:

Հայերէն եւ Անգլերէն լեզուներով ելոյթներ եղան կազմակերպիչ մարմինի ներկայացուցիչները՝ դատապարտելով Անգարայի ուրացման քաղաքականութիւնը եւ պահանջելով հատուցում:

Պոլսոյ Մէջ Հայոց Ցեղասպանութեան Նուիրուած Միջոցառումներու Ընթացքին Ձերբակալուած ԵՆ Երեք Անձեր



Պոլսոյ մէջ ցուցարարներ թրքական պետութեան զոհ դարձած Հայ մտաւորականներու նկարներով

Հայկական պարբերակ «Ակոս»-ը յայտնած է, որ Կ. Պոլսոյ մէջ Հայոց ցեղասպանութեան զոհներու յիշատակին նուիրուած միջոցառման ձերբակալուած են 3 անձեր՝ պատանուներու վրայ գրուած ցեղասպանութիւն բառի պատճառով:

Ոստիկանները տեղեկացուցած են, որ ձերբակալուածները ազատ պիտի արձակուին միջոցառման ավարտէն ետք:

Պոլսոյ մէջ շարք մը միջոցառումներ տեղի ունեցած են՝ ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան զոհներու, մասնակցութեամբ շարք մը հայ, թուրք, քիւրտ, յոյն եւ այլ ազգի ներկայացուցիչ մտաւորականներու, քթիւրքներու, մշակուցի գործիչներու, գիտնականներ եւ մարդու իրաւունքներու պաշտպաններու:

Կը նշուի, որ յիշատակի միջոցառում իրականացուած է Պոլսոյ Սուլթանահմետ թաղամասին մէջ՝ Հայտարարաշահ նաւու կայանի մօտ, ուրկէ 24 Ապրիլ 1915-ին բազմաթիւ հայ մտաւորականներ ուղարկուեցան սպանուելու:

Նոյն միջոցառման ժամանակ յիշատակուած նաեւ 1915-ին սպանուած յոյն եւ ասորի ժողովուրդներու ներկայացուցիչ անմեղ զոհները:

Թուրքիոյ մէջ գործող հայկական «Նոր Զարթօնք» երիտասարդական կազմակերպութիւնը յիշատակի միջոցառում իրականացուցած է նաեւ Պոլսոյ հայաշատ Շիշլի շրջանի հայկական գերեզմանատան մէջ, 7 տարի առաջ՝ 24 Ապրիլին, թրքական բանակին մէջ սպանուած հայազգի զինուոր Սեւակ Պալըքճըրի գերեզմանի մօտ:

Կարօ Փայլանը Թուրքիոյ Իշխանութիւններուն Կոչ Ուղղած Է Քաղաքացիութիւն Շնորհել Ցեղասպանութեան Զոհերու Ժառանգներուն



Թուրքիոյ քրտամետ «Ժողովուրդներու Դեմոկրատական» կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլան օրինագիծ ներկայացուցած է ԹԱՄԺ եւ դիմելով Թուրքիոյ իշխանութիւններուն կոչ ըրած է նախ ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը, ապա քաղաքացիութիւն շնորհել ցեղասպանութեան զոհներու ժառանգներուն:

Կարօ Փայլանը պահանջած է նաեւ դադարեցնել հասարակական վայրերը ցեղասպանութեան յանցագործներու անուններով կոչելու կիրառումը:

Փայլանը միջազգային ասպարէզէն օրինակներ բերելով դիմած է Թուրքիոյ իշխանութիւններուն. «Օրինակ՝ Արժանութիւնը, որ երկար տարիներ կը հերքէր իր կատարածը ի վերջոյ

ընդունեց: Փորթուկալը, Սպանիան եւ շարք մը այլ երկրներ քաղաքացիութիւն շնորհեցին անցեալին այդ երկիրներէն արտաքսուած հրեաներուն»:

«Ցեղասպանութենէն անցած է 103 տարի եւ այդ տարիներու ընթացքին ողջ մնացած հայերը պաշարած են արդարութեան վերականգնման համար: Ցեղասպանութենէն տուժած միլիոնաւոր հայեր մահացած են առանց վայելելու արդարութեան հասնելու գագաթնակէտ: Հայոց ցեղասպանութեան հարցը պէտք է քննարկուի Թուրքիոյ մեծլիսի (խորհրդարան) մէջ եւ երբ այդ մէկը տեղի ունենայ այդ թեման կը դադարի քննարկուելէ այլ խորհրդարաններու մէջ», - նշած է հայազգի պատգամաւորը:

Թեհրանի Մէջ Հայերու Եւ Ազերիներու Միջեւ Բախում Եղած Է



Հայ ցուցարարներ Թեհրանի մէջ

Թեհրանի մէջ բնակող խումբ մը հայեր 24 Ապրիլին բողոքի ցույցեր կազմակերպած են Թուրքիոյ դէմ:


Մասնակիցները ունեցած են պատանուներ, որոնց վրայ գրուած է «Մահ թուրքերուն», «Մահ թուրքիոյ», «Թուրքիոյ դրօշի կարմիր գոյնը ցեղասպանութեան ժամանակ հայերու թափած արիւնն է»:

Ի պատասխան անոր, մօտակաջքը գտնուող ազերիները, իրենց

հերթին, բարձրացուցած են պատանուներ, որոնց վրայ գրուած է «Հարաբաղը մերն է, մերն ալ պիտի մնայ»: Սակայն իրանի ոստիկանութիւնը, համապատասխան միջոցներ ձեռնարկելով, շարք մը ազերիներ ձերբակալած է:

Աղբիւրը նշած է, որ ձերբակալուողները «Հարաւային Ատրպէյճանի ազգային զարթօնք շարժման» ցուցարարներն են:

Թուրքիան Կանգնած Է Ընկերային ճգնաժամի Սեմին. Սեւան Նշանեան



Դանիական Nyheder-TV 2 ալիքը հարցազրոյց կատարած է պոլսահայ յայտնի մտաւորական, լեզուաբան եւ գործարար Սեւան Նշանեանի հետ, որ 3.5 տարի բանտարկութենէ ետք անցեալ տարի փախուստի դիմած էր թրքական բանտէն, ապա ժամանակաւոր կեցութեան իրաւունք ստանալով բնակութիւն հաստատած է Յունաստանի Սամոս կղզիի վրայ:

Նշանեանը թրքական դատարանի կողմէ դատապարտուած էր 17 տարուայ ազատազրկման՝ ապօրինի շինարարութեան եւ հարկերէ խուսափելու համար առաջադրուած մեղադրանքով:

Մտաւորականը Սամոս կղզիի վրայ կը փորձէ նոր կեանք սկսիլ, թէեւ ան Թուրքիոյ մէջ ալ միշտ ազատ զգացած է:

«Բանտի մէջ եղած ժամանակ ալ ես ազատ էի, ես խնդիր չունիմ, ազատութիւնը մարդու ուղեղի մէջ է: Իմ երեխաներուս, իմ ընկերներուս գտնուելու վայրը (Թուրքիա) այստեղէն կ'երեւի, դիմացն է: Այնպիսի փորձիկ հեռաւորութեան վրայ է, որ եթէ պոռած՝ ա՛յնտեղ կը լսուի, սակայն չեմ կրնար երթալ հոն», - պատմած է Նշանեանը:

Ըստ մտաւորականի՝ 2012 թուականէն սկսած Թուրքիոյ իշխանութիւնները հասարակութիւնը կրօնականացնելու նոր, բաւականին

վտանգաւոր ուղի բռնած են:

«Ես նկատեցի, որ անոնք կը փորձեն իսլամը պետական կրօնի կարգավիճակի բերել ու արգիլել կամ խոչընդոտել իւրաքանչիւր բան, որ քննադատութեան կ'ենթարկէ այդ», - ըսած է պոլսահայ մտաւորականը:

2012-ի սեպտեմբերին Նշանեանը նախաձեռնած է կրօնի հարցին մէջ խօսքի եւ միտքի ազատութեան սահմաններու ու Թուրքիոյ մէջ ատելութեան դրսեւորման՝ որպէս յանցանք ճանչնալու սկզբունքներու մասին իր յայտնի յօդուածի հրատարակումը:

«Անկէ ետք իմ դէմ սարսափելի յարձակողական քարոզարշաւ սկսաւ, որ, իմ կարծիքով, ուղղորդուած էր անմիջապէս պետութեան կողմէ», - յիշած է Նշանեանը՝ միեւնոյն ժամանակ շեշտելով, որ Թուրքիոյ մէջ առկայ է շուրջ մէկ դարու ընթացքին մեծ դժուարութիւններով ու մեծ գնով ձեւաւորուած մտաւորական խաւ մը, որ կը շարունակէ գործել նաեւ այսօր:

«Այս մարդիկ ապահով չեն գզար: Մարդիկ վտանգուած կը համարեն իրենց կեանքը, իրենց գոյութիւնը, իրենց ազատութիւնը, իրենց մշակուցի ու նիւթական ունեցուածքը», - համոզուած է Նշանեանը, որ իր կարծիքով՝ Թուրքիան այժմ կանգնած է ընկերային ճգնաժամի սեմին:

«Նիկոլի Ռոմանտիկան և Հրապարակի Էներգետիկան»



ՍՈՒՐԵՆ ԽՈՒՂԱՆԵԱՆ

Միանգամից հպարտութեամբ նշենք, որ Հայաստանի քաղաքական դաշտի վերջին օրերի գարգացումները, Ազգային վերագարթօնքի պահեր պարզեցեց Համայն Հայութեանը:

ՀՀԿ-ի միակ եւ անփոխարինելի համարուող, եւ նախագահութեան երկրորդ շրջանը աւարտած Սերժ Սարգսեանը, իր «շախմատային» քայլերով, սկզբից սահմանադրութիւնը այնուհետեւ ազգային ժողովը իրենով արեց: Յաջորդ եւ յաղթական քայլը այն էր, որ պէտք է սուպեր վարչապետի գահին բազմեր: Այն դէպքում երբ 2014 թ. սահմանադրութեան հանրաքուէն անցկացնելու համար խոստացել էր, որ երրորդ անգամ երկրի բարձրագոյն ղեկի հաւակաւորութիւնը չի ունենայ:

Բայց արի ու տես սուպեր վարչապետին բոլոր լիազօրութիւնները օժտելուց յետոյ ստանձանեց այդ պաշտօնը:

Միգուցէ իսկապէս ՀՀԿ-ում Սերժ Սարգսեանը անփոխարինելի է: Բայց ինչ՞ ասել, ինչպէս բացատրել աւելի քան 10 տարի, հալածուած ու յուսահատուած ժողովրդին, «թէ բան չկայ, ժողովուրդ ջան եւս 10 տարի համբերէք վերջը լաւ կը լինի»:

Այս օրերի մասին կատարեալ գնահատականը անշուշտ պատմութիւնը կտայ:

Մարտի 1-ի դժնդակ օրերի փորձը իր ուսերին շալկած, Նիկոլ Փաշինեանը ազդարարեց իր ազատագրական շարժումը, եւ Հայաստանի քաղաքացու ազատագրումը:

Գիւմրիից սկսած նրա քայլերը, որ տեւեց 14 օր, քաղաքակիրթ ժողովրդին յարիր, քաղաքացիական շարժման բաղադրիչներին բացի ըստ էութեամբ ուսմանտիզմով էր շաղախուած: Յիշենք քայլարշաւի ընթացքում նրա

եւ ընկերների հանդիպումները յուսահատուած ժողովրդի հետ:

Վրանա-խարոյկային հանգրուանումները բաց երկնքի տակ: Ամենատպաւորիչը թերեւս, «Հայրենադարձութիւն» կոչուած ծառատունկն էր Վանաձորի ճանապարհին: Բնականաբար մինչեւ մուտքը Երեւան, հրապարակային մի քանի ակցիաներ հասունացել էին, «իմ քայլը» շարժման նախաձեռնողների շուրջ, երիտասարդ զանգուածների համախմբումը:

Ի սկզբանէ Նիկոլ Փաշինեանի շարժումը Սերժ Սարգսեանի դէմ, յայտարարուած էր, որ դա լոկ Սերժ Սարգսեան անձի դէմ է, այլ Սերժական համակարգի դէմ: Բայց ձեռքերով առանց բռնութեան անհնազանդութեան ակցիաները, չէր կարող իրականութիւն դառնալ, եթէ քաղաքական տեխնոլոգիաների հետ միասին ճիշտ մարտավարութիւն չդրսեւորուեր: Իրավիճակը նման պարագաներում շատ արագ հսկողութիւնից դուրս է գալիս, եւ իշխանութիւնների կողմից բիրտ ուժի գործադրման առիթ է ստեղծում: Սակայն բարեբախտաբար առ այսօր շարժման ղեկավարութիւնը յանձինս Նիկոլ Փաշինեանի մեծ հմտութեամբ տիրապետում են այս փուլի գործընթացներին: Սակայն բիրտ ուժի գործադրման վտանգը դեռ առկայ է:

Փողոցում ստեղծուած այս էներգետիկ դաշտը չի կարող ինչ որ յաջողութիւն շարձանագրի:

Գլխաւորը վախի եւ անտարբերութեան թօթափումն է: Երիտասարդութիւնը յանուն Հայաստանի վաղուայ օրուայ եւ իր ապագայի, համախմբուեց, անսպասելի արագութեամբ եւ այսօր հասունացել է այն պահը, որ քաղաքական երկխօսութեան մթնոլորտ ձեւաւորուի: Համակարգային փոփոխութիւնը դառնայ երկխօսութիւնների հիմքը: Շատ կարեւոր է, որ այս հսկայ զանգուածային շարժումը, իր խաղաղ բնույթը

չփոխի: Իշխանափոխութեան նման անցնում իրականացման պարագայում Հայաստանի Հանրապետութեան վարկանիշը միջազգային ասպարէզում աներեւակայեւ բարձրացում կարձանագրի: Սա այն հանգամանքն է, որը կապահովի Հայաստանը դառնայ ինքնուրոյն եւ հզօր խաղացող:

Սերժ Սարգսեանը շարժման ալիքի ճնշման տակ կամովի հրաժարուեց կառավարութեան կողմից նուիրաբերուած յայտնի առանձնատնից: Նախագահ Արմէն Սարգսեանի միջնորդութեամբ կայացաւ Սերժ Սարգսեանի հանդիպումը Նիկոլ Փաշինեանի հետ Մարիոտ հիւրանոցում:

Բայց արձանագրենք, որ իրականութեան մէջ եղաւ հանդիպում, բայց չկայացաւ բանակցութիւն:

Ինչու՞: Որովհետեւ ցաւօք սրտի հայ իրականութեան մէջ երկխօսութեան նման մշակույթ, ցայսօր ձեւաւորուած չի եղել:

«Արքայական» գահին սովոր բռնապետը, իհարկէ պիտի նյարդանանար, սովորական աթոռին նստելով, անձանթ ոչ հրաւիրուած լրագրողների ներկայութիւնից, նամանաւանդ առանց նախաբանի հրաժարական պահանջող ցուցարարների առաջնորդից:

Միգուցէ նման կարգի բանակցութեան ֆորմատը չպահանջուեց նաեւ Նիկոլի կողմից, առանց նախաբանի միանգամից անցում կատարեց բովանդակութեանը: Դիւանագիտական լեզուին տիրապետելը քաղաքականութեան մէջ, պարտադիր է:

Չնայած արդիւնքը կարող էր լինել նոյնը, այսինքն Սերժ Սարգսեանը հրաժարուեց հրաժարականից: Սակայն որդեգրուած քաղաքական պայքարի այս ձեւը, հայկական մշակույթի նշանոց էլ աւելի կը բարձրացներ: Նշուած անսովոր հանդիպում

մը աւարտուեց Սերժ Սարգսեանի Մարտի 1-ի դասերի մասին չիշեցումներով դահլիճը լքելուն: Կարճ ժամանակ անց հերթական խաղաղ ցույցի ելած ցուցարարների դէմը փակեցին ոստիկանական շղթան: Այդ պահին բռնի ուժով ձերբակալուեցին եւ բեկման ենթարկեցին Նիկոլը իր 2 պատգամաւոր ընկերների հետ: Առաջնորդի ձերբակալումը բոլորովին չընկճեց ցուցարարներին, որովհետեւ վստահ էին, որ նա, էլ աւելի հերոսացած կվերադառնայ ասպարէզ:

Ժամերի ընթացքում հասունացաւ, բաղձալի եւ պատմական պահը, որ յայտարարուեց վարչապետի հրաժարականը:

Ցնցող էր: Շատ-շատերի համար անհաւատալի: Համաշխարհային լրատուամիջոցները ապշահար սկսեցին լուսաբանել, այս նոր երեւոյթը: Բայց ձեռքերով, խաղաղ ակցիաներով, անուանափոխութիւն: Համաշխարհային օլիգարխիի համակարգի խաղի կանոններից դուրս երեւոյթ էր:

Առանց գոհերի եւ մեծ ցնցումների այս թաւշեայ յեղափոխութիւնը վստահօրէն «Մայրաններ» չի ունենալու եւ ոչ էլ Մարտի մէկն է կրկնուելու:

Բերէք ողջունենք մեր նոր սերնդին, եւ բոլոր այն մարդկանց, որոնք իրենց լուծման ներդրեցին այս երեւոյթի համար, պետականաշինութեան նոր համակարգի կազմաւորման համար:

Վերջում յուսանք, հեռացող ռեժիմը անհրաժեշտ սթափութիւնը կ'ունենայ որ որեւէ պատճառով, «արտակարգ դրութիւն» պատրուակով, զրահատանկային մեքենաներով չի ողողի Երեւանեան փողոցները:

Այսպիսով Քաղաքական գարնանամուտը նոր շունչ ու նոր կեանք կը հաղորդի մեր հայրենիքին:

Կլէնտէյ



Mother's DAY

DINNER DANCE

Մայրերու Օրուայ Ծաշկերոյթ

Կազմակերպութեամբ՝

ԿԼԵՆՏԵԼԻ ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԺԻՂ ԵՒ Հ.Մ.Մ.-Ի ՏԻԿԵԱՑ ՄԻՈՒԹԻՒՆԻՆ

ՇԱԲԱԹ, 12 ՄԱՅԻՍ, 2018

Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
 Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Երեկոն կը խանդաւարէ՝ D.J. Alex

Մուտքի անոյթ՝ \$40

Տոմսերու համար դիմել՝
 Կարօ (818) 913-4024 կամ Աւօ (818) 913-9311

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ

ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԸԵՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Մեծ Եռեռնի Ոգեկոչում Փասատինայի Մեմորիալ Ջբոսայգիին Մէջ



Մեծ Եռեռնի 103րդ տարեդարձին առիթով Փասատինայի մէջ եւս տեղի ունեցաւ պատշաճ յուշահանդէս Ապրիլ 22ին, տեղւոյն Յիշատակութեան զբոսայգիին (Me-

ցեղասպանութեան վրայ, որուն գոհերը դաձան մէկ ու կէս միլիոն հայեր: Գ. Մոլոյեան բուն կերպով դատապարտեց Թուրքիոյ մէջ տիրող հակաժողովրդավար իշխանութիւնները, որով տասնեակ հազարաւոր անմեղ քաղաքացիներ, լրագրողներ եւ մտաւորականներ բանտերու մէջ կը տառապին, որպէս նոր գոհերը տիրող իշխանութեան:

«Կայծ» Երիտասարդաց Միութեան անունով Ալիսըն Ղաֆարի իսկ Հայ Ամերիկեան Խորհուրդին կողմէ (ՀԱԽ) Քրիստին Աղախանեան իրենց ելոյթներով շեշտեցին նորահաս սերունդի վիճակուած



morial Park) մէջ: «Կայծ» Երիտասարդաց Միութեան եւ Հայ Ամերիկեան Խորհուրդին (ՀԱԽ) կողմէ կազմակերպուած սոցն միջոցառումին ներկայէն քաղաքի տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ լրագրողներ:

Ամերիկայի եւ Հայաստանի գոյգ քայլերգներու յոտնկայս ունկնդրութենէն ետք, գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը: Կազմակերպիչ մարմնի անունով ելոյթ ունեցաւ Հայ Ամերիկեան Խորհուրդի պատասխանատու-



առողջ կեցուածքը եւ պահանջատէր հայ ժողովուրդի արդար պաշարին գորակցիլը:

Գործադրուեցաւ զեղարուեստական ճոխ յայտագիր մը: Ասմունքով հանդէս եկան Գարինա Գոռնէհօ եւ Անժելա Փաշանեան: Հայկական երաժշտական գործիքներու կատարմամբ ելոյթ ունեցան Լիլիթ Խօճայեան (քանոն) եւ Արմէն Ստեփանեան (տուտուկ) Ազգային երգերու մեկնաբանութիւնները կատարեցին Յարութ Յակոբեան եւ Արթուր Ակոբեան (mister x): Իսկ ազգագրական տոհմիկ պարերու կատարմամբ ելոյթ ունեցաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբը (զեղարուեստական ղեկավար Վարդուհի Մինասեան): Բոլոր կատարումներն ալ մեծ ոգեւորութիւն եւ տպաւորութիւն ձգեցին հանդիսականներուն մօտ:

Աւարտին ներկաները մէկական մեխակներ ձեռքերին, ուղղուեցան դէպի մօտակայ նահատակաց յուշարձանը եւ զետեղեցին պատուանդանին վրայ, ի յարգանս մեր սրբադաստուած բիւրաւոր նահատակներուն:



ներէն իրաւաբան Գրիգոր Մոլոյեան: Ան հպանցիկ ակնարկով մը չիշեց աշխարհի տարբեր ցամաքամասերու վրայ տեղի ունեցած տարբեր ժամանակներու ցեղասպանութիւնները: Առանձնապէս ծանրացաւ 103 տարիներ առաջ տեղի ունեցած 20րդ դարու առանջին

Ապրիլեան Ոգեկոչում Փասատինայի Կիրակոս Սրահին Մէջ

Երկուշաբթի Ապրիլ 23, 2018, երեկոյեան ժամը 8:00ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Կիրակոս սրահին մէջ աւելի քան 250 հոգիներու ներկայութեան տեղի ունեցաւ ապրիլեան ոգեկոչում, ի յիշատակ մեծ Եղեռնի անմեղ գոհերուն:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած սոցն միջոցառումին իր գործօն մասնակցութիւնն ունեցաւ նաեւ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը:

Իրաւաբան Գրիգոր Մոլոյեան: Ան հպանցիկ ակնարկով մը անդրադարձաւ հայոց ցեղասպանութեան պատմական փաստին վրայ: Այնուհետեւ ընդգծեց հայ երիտասարդութեան պարտաւորութիւնները ազգային եւ հասարակական տարբեր բնագաւառներէ ներս: Մասնաւորաբար նշեց. «...այս նորահաս սերունդի մեծամասնութիւնը ներկայիս աշխոյժ գործունէութիւն կը տեսնէ Հայաստանի մէջ: Իրենց ջանքերով է որ հարիւր հազարա-



Հ.Բ.Ը.Մ.ի սկաուտներուն կողմէ դրօշակի հանդիսաւոր արարողութենէն ետք տեղի ունեցաւ ԱՄՆի եւ Հայաստանի գոյգ քայլերգներու ունկնդրութիւնն ու մէկ վայրկեանի յոտնկայս լուսնութիւնը ի յիշատակ մեր սրբադասուած գոհերուն:

ւորներ, վերջերս, երկրի տարբեր շրջաններուն մէջ, տիրակալ վարչապետին պարտադրեցին որպէսզի իր հարաժարականը տայ»:

Գրիգոր Մոլոյեան շեշտեց որ հայ երիտասարդը քաջալերանքի կը կարօտի բոլոր մարգերու մէջ: Ան յորդորեց նաեւ վառ պահել յիշատակը մեր նահատակներու եւ խթանել հայապահպանման ծրագիրներու իրականացումը, մաղթելով որ 21րդ դարն ըլլայ հայոց պատմութեան նոր ոսկեդարը:

Գործադրուեցաւ զեղարուեստական յայտագիր մը, մասնակցութեամբ Յովսէփեան վարժարանի աշակերտութեան, ինչպէս նաեւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբին եւ շնորհալի երգիչներ Կարօ Սիւլահեանի («Երազ



իւր բացման խօսքին մէջ օրուան հանդիսավար Վահէ Չարխուտեան ողջունեց Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի փոխանորդ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտմեանի եւ այլոց ներկայութիւնը: Ան նշեց որ այսօրուան յայտագիրը ամբողջութեամբ պարաստուած է հայ գաղութի եւ եկեղեցւոյ երիտասարդներէն, որոնք ցեղասպանութեան երրորդ կամ չորրորդ սերունդէն են: Այսպիսով ցոյց տալու մեր ժողովրդի անկոտորում հաւատքը եւ կամքը: Ամէն տարի պիտի շարունակենք մեր ուխտը ըսելով «Սրբազան Լեռ, հաւատայ, թէ կը հասնինք, մենք կը հասնինք կատարիդ»:

Արման Սրկ. Երջանեան իր խօսքին մէջ շեշտեց որ բովանդակ աշխարհի մէջ սկսած է լայնածաւալ ճանաչում ստանալ հայոց ցեղասպանութիւնը եւ հայ երիտասարդութեան առջեւ դրուած առաջնահերթ պարտաւորութիւններէն է շարունակել պահանջատիրութեան սրբազան առաքելութիւնը, հզօր հայրենիք մը ունենալու տեսլականով:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան անունով խօսք առաւ



իւմ Երկիր Հայրենիք», «Թռչի Մտքով Տուն» եւ «Կիլիկիա») եւ Առնօ Մկրտիչեանի («Պիտի Գնանք», «Հպարտ Գնացք», «Ատանայի Ողբը» եւ «Լերան Լանչին») կատարումները:

Փակման խօսքը կատարեց Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտմեան: Ան Մեծ Եղեռնէն պատմեց սրտայոյզ դրուագ մը եւ ապա նշեց որ ժողովուրդի յիշողութեան մէջ միշտ առկայ են նման իրողութիւններ: Ապա յորդորեց գուրգուրալ մեր արժէքներուն վրայ միշտ այն յոյսով որ օր մը պիտի վերադառնանք առաւել պայծառ ու կենսութեամբ երազային հայրենիք մը:

Թրքական Կայքէջ. Խարբերդէն Մինչեւ ԱՄՆ. Ամերիկահայ Դերասան Էրիկ Պօղոսեանի Ընտանիքի՝ Ցեղասպանութենէն Փրկուելու Պատմութիւնը



1915 TEN BUGÜNE

Թրքական gazetekarınca.com կայքը Հայոց ցեղասպանութեան գոհերու յիշատակի օրուան կապակցութեամբ ներկայացուցած է ամերիկահայ դերասան Էրիկ Պօղոսեանի ընտանիքի՝ ցեղասպանութենէն փրկուելու եւ հայրենիքէն հեռու կեանքը շարունակելու պատմութիւնը:

auroraprizе.com կայքի «100 կեանք» նախագիծի կատարած հարցազրոյցը Էրիկ Պօղոսեանի հետ թուրքական կայքը թարգմանած եւ ներկայացուցած է ամբողջութեամբ օգտագործելով ցեղասպանութիւն բառը առանց չակերտներու:

Պոսթըն ծնած Պօղոսեանի ընտանիքը ԱՄՆ հասած է Արեւմտեան Հայաստանի պատմական Խարբերդ գաւառէն: Ամերիկահայ դերասանը յիշած է, որ ընտանիքի մէջ յաճախ չէր խօսուած անցած ցաւերու ու կորուստներու մասին, սակայն այդ չէ խանգարած, որ ինք ծանօթանայ իր պատմութեան:

«Ես միայն գիտեմ, որ մեծ հայրս 1915-ին հասած է ԱՄՆ:

Անոնք Խարբերդէն էին: Պապ՝ Մկրտիչը, փախած ու փրկուած է ցեղասպանութենէն, սակայն ինչպէս փախած է՝ չեմ գիտեր:

Ճանապարհին ան փրկած է նաեւ մօրս, որու հայրը սպանուած էր: Մայրս մինչեւ կեանքի վերջ ապրեցաւ անոնց հետ Մասաչուսեթսի մէջ, ան անգլերէն չէր գիտեր: Ընտանիքս չէր խօսեր ցեղասպանութեան մասին, թէ ինչ եղած է Թուրքիոյ մէջ, անոնց համար բոլորը բացասական միտքեր էին»,- պատմած է Պօղոսեանը:

Ամերիկահայ դերասանի ծննդեան օրը 24 ապրիլին է: Ան յիշած է, որ ընտանիքի մէջ չէին պատմած, որ այդ նաեւ յիշատակի օր է:

«Երբ ես իմացայ, թէ ինչ պատահած է Մկրտիչ մեծ հօրս հետ Թուրքիոյ մէջ՝ շատ փոքր էի: Երեւի 4 տարեկան: Ամբողջ կեանքիս ընթացքին ուսումնասիրած եմ Հայոց ցեղասպանութիւնը, սակայն վերջին 10 տարին աւելի մեծ թափով: Յաւոք, մեր հին երկիրէն, մեր հին քաղաքէն՝ Խարբերդէն, ոչինչ ունինք»,- նշած է Պօղոսեանը:

Թաներ Աքչամ Շուէտի Խորհրդարանին Մէջ Ելոյթ Ունեցած է



24 Ապրիլին, Շուէտի խորհրդարանի մէջ տեղի ունեցած է Հայոց ցեղասպանութեան նուիրուած յիշատակի արարողութիւն, որու մասին ֆեյսբուքեան իր էջի վրայ գրած էր յայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամը:

«Այսօր՝ 24 Ապրիլին, մենք պիտի ոգեկոչենք մարդկութեան պատմութեան խոշորագոյն ոճիրներէն մէկը՝ Հայոց ցեղասպանութեան օրը: Շուէտի խոր-

հրդարանի մէջ առաջին անգամ տեղի պիտի ունենայ յիշատակի պաշտօնական արարողութիւն, որու բանախօսներէն մէկն եմ ես: Պիտի խօսիմ թուրքական ժխտողականութեան մասին եւ պիտի պնդեմ, որ ժխտողականութիւնը կառուցուած քայլին բնոյթ ունի է եւ պէտք է համեմատուի ցեղապաշտութեան հետ»,- գրած է Աքչամը:

Պատմաբանը աւելցուցած է, որ թուրքական ժխտողակա-

«Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Նպաստը Լիբանանի Հայկական Վարժարաններուն



CALOUSTE GULBENKIAN
FOUNDATION
ARMENIAN COMMUNITIES

«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքը Լիբանանի հայկական վարժարաններուն 220,000 ամերիկեան տոլար պիտի տրամադրէ 2017-2018 տարեշրջանին: 2015 թուականին «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Լիբանանի Հայեցի Դաստիարակութեան Յատուկ Նշանակութեան Յանձնախումբ»-ին նախաձեռնութեամբ իրագործուած ինքնագնահատումի ծրագրին մասնակցած 23 վարժարաններէն աչօր 17 հատը կը գործեն, ուստի ասոնց միջեւ պիտի բաժնուի նշանակուած գումարը, ըստ ամէն մէկուն աշակերտութեան թիւին:

Նկատի ունենալով Լիբանանի խորհրդարանին վերջերս վաւերացուցած օրէնքը՝ ըստ որուն բոլոր վարժարանները պէտք է կիրարկեն ուսուցիչներու աշխատավարձերու յաւելումներ եւ զիտակցելով հայկական վարժարաններուն պարտաւորութիւնն ու դժուարութիւնը լիովին գործադրելու այս նոր օրէնքը, Հիմնարկութիւնը կը նախընտրէ իր նպաստը յատկացնել հայերէն լեզուով դասաւանդող ուսուցիչներու ամսականներուն հասանելի յաւելումին:

Գումարին փոխանցումը պիտի կատարուի Ապրիլ ամսուան ընթացքին:

Հայերու Դեմ Ատելավառ Խօսքերը կը Շարունակուին. Միայն 2017-ին Հայերուն Դեմ Հնչած է 885 Վիրաւորանք

Թուրքիոյ մէջ գործող Հրանդ Տինքի անուան հիմնարկամբ հրապարակած է ատելութեան դրսեւորումներու մասին 2017 թուականի զեկոյցը:

Զեկոյցի մէջ տեղ գտած են ամբողջ տարուայ ընթացքին թրքական տարբեր լրատուամիջոցներու գործունէութեան վերաբերեալ արդիւնքները, որոնք արտացոլումն է Թուրքիոյ մէջ ապրող տարբեր ազգային, կրօնական եւ այլ փոքրամասնութիւններու հանդէպ տեղական մամուլի մէջ ատելութեան դրսեւորում համարուող խտրական կամ վիրաւորական արտայայտութիւններու, կոչերու եւ եզրոյթներու կիրառումը, որ ազդած է երկրի հասարակական վերաբերմունքի վրայ:

Ուսումնասիրութիւնը փաստած է, որ 2017-ի ընթացքին թրքական մամուլի մէջ ամէնէն շատ թիրախաւորուած են հրեաները. անոնց հանդէպ զրաւոր ատելութեան դրսեւորումները տարբեր լրատուամիջոցներու մէջ հասած են 1.251-ի:

Հայերը թրքական մամուլի մէջ վիրաւորական արտայայտութիւններով յիշատակուած են 855 անգամ՝ յաջորդելով սուրիացի ներգաղթեալներուն, որոնք մամուլի մէջ իրենց դէմ ատելութեան դրսեւորման դէպքի գոհ դարձած են 1.148 անգամ:

Յուշակի վրայ տեղ գտած են նաեւ յոյները, բրիտանացիները, գերմանացիները, արաբները, ռուսները, նիտեւլանտցիները, ամերիկացիները, իրաքցիները, իրանցիները եւ այլք: Ատելութեան ու խտրական

վերաբերմունքի 543 դէպք հաստատուած է «քրիստոնեայ» եւ 66 դէպք «աթէիստ» բառի կիրառմամբ:

Քիւրտերը մամուլի մէջ վիրաւորական արտայայտութիւններով յիշատակուած են 80 անգամ՝ յայտնուելով ընդհանուր ցուցակի 14-րդ տեղի վրայ:

Ամէնէն շատ ատելութեան դրսեւորմամբ արտայայտութիւններ, բառեր կամ եզրոյթներ կիրառած է թրքական «Ենի Աքիթ» պարբերականը, որու էջերու վրայ 2017-ին ընթացքին տարբեր լուրերու եւ յղուածներու մէջ 257 անգամ օգտագործուած են վիրաւորական բառեր փոքրամասնութիւններու շարք մը խնդիրներու վերաբերեալ:

Երկրորդ տեղը կը զբաղէ «Միլլի Կագեթէ»-ն, ուր ատելութեան դրսեւորումներ հաստատուած են տարուայ ընթացքին 231 անգամ:

Անոնց յաջորդած է «Յենի Մեսաթ», «Յենիչաղ» եւ «Միլլաթ» պարբերականները՝ ատելութեան տարբեր դրսեւորումներու համապատասխանաբար 138, 135 եւ 131 դէպքերով:

Յանկի վրայ տեղ գտած են թուրքական այնպիսի յայտնի եւ ընթերցող պարբերականներ, ինչպիսիք են «Սթար»-ը, «Սօզճու»-ն, «Յենի Շաֆաք»-ը, «Թուրքիէ»-ն, «Այտընլըք»-ը եւ այլն:

Ատելութիւն սերմանող հրապարակումներու ու յղուածներու հրապարակման հարցին մէջ առաջատար հանդիսացող տուեալ պարբերականներու զգալի մասը կը համարուին իշխանամէտ մամուլի ներկայացուցիչներ:

Նութիւնը չէ սահմանափակուած 1915 թուականով, մեր օրերուն այդ ժխտողականութիւնը քիւր-

տերու նկատմամբ տարուող քաղաքականութեան հիմնական տարրն է:

Massis Weekly

Volume 38, No. 16

Saturday, April 28, 2018

Armenians Celebrate Successful "Velvet" Revolution Serzh Sarkisian Forced to Resign As Prime Minister Nikol Pashinian Demands ruling Republican Party to hand over power



YEREVAN -- Armenia's Prime Minister Serzh Sarkisian stepped down on Monday after ten days of unprecedented street protests against his attempt to extend his decade-long rule.

"[Opposition leader] Nikol Pashinian was right," he said in a written address to the nation. "I was mistaken. There are several solutions to the existing situation but I will not opt for any of them. They are not to my liking."

"I am resigning from the post of prime minister, leader of the country," he declared.

"The movement in the streets is against my tenure. I am fulfilling your demand. I wish our country peace, harmony and common sense," he said.

The announcement sparked jubilant scenes in the streets of Yerevan filled with hundreds of thousands of people demanding his resignation. The sound of car horns and fireworks reverberated across the Armenian capital.

"Dear proud citizens of the Republic of Armenia, you have won!" protest leader Pashinian told a cheering crowd of thousands gathered on Republic Square on April 23.

He said there were no foreign countries involved in the protest movement and called it a "purely Armenian velvet revolution."

Jubilant crowds were converging on the city's central Republic Square where Pashinian, who launched the campaign on April 13, addressed sup-

porters later in the day. Some of them sang, danced and clapped their hands.

"I have grown so used to [Sarkisian's] lies that I just can't believe he has resigned," one woman told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "Everyone is euphoric now but the hardest part starts now."

"We have achieved our goal and everything will be alright from now on," said another, younger woman.

Sarkisian publicly rejected the demands for his resignation as recently as on Sunday morning. At a televised meeting with Pashinian, he accused the opposition leader of blackmailing "the legitimate authorities of the state." "A faction that got 7-8 percent of the vote [in the April 2017

parliamentary elections] cannot speak on behalf of the people," he said, referring to the opposition Yelk bloc, of which Pashinian is a leader.

Pashinian was detained more than an hour after that tense meeting while holding a fresh demonstration in Yerevan. The arrest only added to popular anger with Sarkisian, with tens of thousands of people flocking to Republic Square on Sunday night.

The protests resumed in Yerevan and other Armenian cities the following morning. Pashinian was set free in the afternoon shortly after Karapetian visited him in custody.

On Tuesday Pashinian threatened

Continued on page 3

Armenia Marks Genocide Anniversary



YEREVAN -- Armenia marked on Tuesday the 103rd anniversary of the 1915 genocide of Armenians in Ottoman Turkey, with tens of thousands of people silently walking to the Tsitsernakabert memorial and laying flowers there throughout the day.

As always, the annual procession began with a prayer service held by Catholicos Karekin II by the eternal fire of the hilltop memorial overlooking cen-

tral Yerevan. The ceremony was attended by President Armen Sarkissian, acting Prime Minister Karen Karapetian and other senior state officials.

The genocide anniversary commemorations came the day after Prime Minister Serzh Sarkisian stepped down amid massive nationwide protests against his attempt to extend his decade-long rule. Sarkisian did not visit Tsitsernakabert.

Statement by President Trump on Armenian Remembrance Day 2018

Today we commemorate the Meds Yeghern, one of the worst mass atrocities of the 20th century, when one and a half million Armenians were deported, massacred, or marched to their deaths in the final years of the Ottoman Empire. We recall the horrific events of 1915 and grieve for the lives lost and the many who suffered.

We also take this moment to recognize the courage of those individuals who sought to end the violence, and those who contributed to aiding survivors and rebuilding communities, including the U.S. Ambassador to the Ottoman Empire, Henry Morgenthau, who sought to end the violence and later raised funds through the Near East Relief to help the Armenian people. We note with deep respect the resilience of the Armenian people, so many of whom built new lives in the United States and have made countless contributions to our country.

As we honor the memory of those who suffered, we also reflect on our



commitment to ensure that such atrocities are not repeated. We underscore the importance of acknowledging and reckoning with painful elements of the past as a necessary step towards creating a more tolerant future.

On this solemn day, we stand with the Armenian people throughout the world in honoring the memory of those lost and commit to work together to build a better future.

President Donald Trump
The White House
April 24, 2018

Emmanuel Macron – France Stands by Armenia to Commemorate Genocide Anniversary



PARIS — French President Emmanuel Macron has addressed an April 24 message to Armenian President Armen Sarkissian. The message reads:

“Mr. President,

We stand by You to remember the April 24, 1915 in Constantinople and the killing of 600 Armenian intellectuals, which marked the start of the first genocide of the 20th century. We will never forget the murdered men, women and children, who died of hunger, cold and agony on their way to exile.

France, which deplored the Armenian massacres in the Ottoman Empire with the voices of Georges

Clemenceau, Anatole France and Jean Jaurès, hosted ? great number of survivors.

As early as May 25, 1915, France, along with Great Britain and Russia, called the massacres a crime against humanity and civilization. In September 2015 the French navy managed to save 4,000 refugees from Musa Dagh.

The memory of the genocide and the meaning of its lessons refers to each of us. On this 103rd anniversary of the Armenian Genocide I address my warmest and most friendly thoughts to You and Your people.

Please, accept, Mr. President, the assurance of my highest consideration.”

Erdogan – “Turkey Shares the Historical Pain of Our Armenian Citizens”

ANKARA — Turkish President Recep Tayyip Erdogan has issued a statement to the Istanbul-Armenians on April 24 – the 103rd anniversary of the Armenian Genocide.

The statement was read during the liturgy delivered at the Armenian Patriarchate of Istanbul.

“It is Turkey’s conscientious and ethical responsibility to share the historical pain of our Armenian citizens,” read the statement.

“We will continue to share your pain and try to resolve your problems in the future,”

“I believe that our Armenian citizens will continue increasing their contribution to our cultural, social, political and commercial life. I ask you to avoid helping those who are trying to create hatred and hostility by damag-



ing our common history. With these thoughts I again remember with respect the Ottoman Armenians who died during the First World War”, added the statement, which was read out both in Armenian and Turkish.

Congressman Schiff “Deeply Concerned” Over Protests in Armenia

GLENDALE, CA – In an exclusive interview, Massis Post discussed various issues with Rep. Adam Schiff (D-Burbank) affecting the Armenian American community. The following is a transcript of the interview:

Massis Post: Thank you Congressman for taking the time to talk to Massis Post about issues that are relevant to our community. Our first question deals with U.S. recognition of the Armenian Genocide. What is the status of the current Armenian Genocide resolution in Congress?

Congressman Schiff: We have between 80 and 90 co-sponsors and we continue to try to press to have it taken up on the House floor. I was talking to Representative David Trott who is my GOP counterpart. He’s retiring this year and he’s asking the Speaker as his sole ask for his remaining year in Congress to take up the Genocide resolution in Congress. It really is up to the Speaker and it’s the Speaker’s last year as well, so there is an opportunity if the Speaker is willing to make this a part of his legacy for us to have a vote on the House floor. We’re also hopeful that the President will take another look and be persuaded to recognize the Genocide this year. As you know, he didn’t recognize it last year, but the President is nothing if not unpredictable and he could be moved to do so. Certainly Erdogan is doing a lot to antagonize the United States and that might be part of the motivation that the President needs to do the right thing here. So I would hope that he would. I think if anyone could reach the TV personalities on FOX and get them to talk about recognizing the Genocide, the President pays deep attention to what the morning hosts say on FOX and does a lot of what they urge, so that’s one very effective way to lobby the President is by going on FOX. But we need to keep pushing at both avenues – on the Presidential level as well as in Congress.

MP: As you may be aware, Armenians in the Middle East are being negatively affected by the current administration’s immigration policy, what is the current status of the immigration policy, and what are your thoughts on them?

CS: Particularly for Syrians of Armenian origin, it’s very bleak. I think we’ve only this year allowed about a dozen people to immigrate from Syria. It’s been practically a full stop on any refugees from coming here. Armenia has taken a great many of the Syrian refugees. One of the things that we’ve been trying to do is to make sure that Armenia is not penalized for granting them citizenship because traditionally when someone is a citizen they don’t qualify for as much relief because they are no longer a refugee. The fact that Armenia is extending citizenship to people shouldn’t be a penalty, it’s something that is encouraged of countries that are taking in refugees if that is the will of the refugees to stay. So I wish that we were doing more at home to provide a safe place for families that have had to flee the violence. I know that it’s been



a challenge particularly for those immigrating from Syria of Armenian origin, but likewise Armenians from Iran are having a great deal of difficulty, many holed up still in Vienna trying to come here through the HIAS program, so we in our office continue to work with them on a case by case basis, but it’s been very very difficult.


MP: Within the past year many ethnic Armenians who are undocumented have been rounded up by Immigration and Customs Enforcement, is there any movement or hope within Congress to give such individuals a path to legal status?

CS: This has been the big bipartisan challenge for many years – passing a comprehensive immigration bill that would allow people a path to citizenship that are here but are undocumented. And unfortunately at times it looks like we are very close. At the moment we seem to be at an impasse that the President is determined to build a wall at the border which does not enjoy popular support and he is attempting to leverage everything else to build a wall, so he’s holding the fate of the Dreamers in the air until he can get billions of dollars for his wall. The President has been resistant to the idea of providing a legal pathway to citizenship for people. Whenever I think he entertains the idea, I think there was a point at which he seemed to have reached an agreement with Chuck Schumer and Nancy Pelosi, the hardliners within the Administration, the Stephen Millers, among others and those on FOX like Laura Ingraham accuse him of amnesty and then he backs away. So it’s proven to be a moving target and very difficult. But the idea of a comprehensive reform does enjoy bipartisan support and we just need to keep fighting for it until the climate is suitable and we can get the job done.

MP: What is your opinion on the current political protests in Armenia due to the appointment of the former President Serzh Sarkisian as Prime Minister?

CS: Deeply concerned. I was in Armenia some years ago after a deeply contested election in which there was violence in the streets and several people were killed. I just hope and pray that there is no loss of life with the massive demonstrations that are going on today. I understand the deep concern over whether Sarkisian is attempting to follow the model that Putin has laid

Continued on page 3



MEMBER

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com

California Legislature Commemorates the 103rd Anniversary of the Armenian Genocide



SACRAMENTO, CA—Members of the California Legislature commemorated the 103rd anniversary of the Armenian Genocide, even as the United States continues to turn a blind eye to the genocide of 1.5 million Armenians.

“We commemorate the anniversary of the Armenian Genocide and the 1.5 million lives lost. What happened 103 years ago can never be undone, but through education we take steps to ensure that history never repeats itself,” said Senator Scott Wilk. “The strength of the survivors and their descendants is evidenced by the leaders, innovators and thinkers of Armenian descent who have enriched our communities and thrived both here in America and throughout the world.”

“Today, we remember and honor the 1.5 million souls lost during the Armenian Genocide and celebrate the strength and perseverance of our community,” stated Assembly member Adrin Nazarian. “Our community is flourishing in California yet we must remain vigilant against injustice, home and abroad.”

“I am honored to join with the Armenian Caucus to coauthor a resolution recognizing and commemorating the Armenian Genocide. While Washington continues to accept Turkey’s century of denial and Azeri aggression toward Artsakh I am proud of California’s efforts to lead by example and annually recognize the Armenian Genocide and expose and condemn civil rights abuses perpetrated against the Armenian people,” commented Senator Anthony Portantino.

“We reflect today upon one of the darkest chapters in our shared history,” said Assemblymember Laura Friedman (D-Glendale). “In the Capitol and across California, we pause to honor the 1.5 million lost, we celebrate the resiliency of the Armenian people, and we remind our leaders that until there is worldwide recognition of the genocide, justice is denied.”

During the Senate and Assembly floor sessions Senator Wilk and Assemblymember Nazarian honored Professor Richard Hovanessian as an outstanding Armenian-American and presented him with a Joint Legislative Resolution commemorating the genocide.

Professor Hovanessian is a well-respected scholar known for his five-volume history of the First Republic of Armenia. He is a professor of Armenian and Near Eastern History and the first holder of the Armenian Educational Foundation Chair in Modern Armenian History at the University of California, Los Angeles (UCLA); a Distinguished President’s Fellow at Chapman University; and an adjunct professor of history at the University of Southern California to work with the Shoah Foundation.

The Armenian Caucus also provided legislators with the book, “There Is Only The Earth” by Scout Tufankjian.

The Armenian Caucus was formed in 2015. It is a platform for Armenian-American voices at a statewide level and is open to all legislators, Armenian or not, who are interested in learning more about the community’s issues.

Serzh Sarkisian Forced to Resign

Continued from page 1

to resume his street protests “on an even larger scale” if the ruling Republican Party of Armenia (HHK) refuses to hand over power to his popular movement.

Pashinian again demanded that the HHK-led majority in the Armenian parliament appoint “a candidate of the people” as interim prime minister before calling fresh general elections. He vowed to complete his declared “velvet revolution” one day after forcing Serzh Sarkisian’s resignation

“If we managed to achieve Serzh Sarkisian’s resignation, we are confi-

dent that we can also make the Republican Party obey the will of the people. If not, we will continue our actions on an even larger scale,” he told a news conference held for foreign media.

Pashinian said this will be “the only theme” of his planned talks with acting Prime Minister Karen Karapetian. He said Karapetian, who is the HHK’s first deputy chairman, must not retain his post even if he quits the ruling party.

“I am speaking on behalf of the Armenian people,” claimed the 42-year-old organizer of 11-day massive demonstrations which resulted in Sarkisian’s resignation.

MP Garo Paylan Asks Turkish Parliament to Recognize Armenian Genocide



ISTANBUL — Peoples’ Democratic Party (HDP) Istanbul-Armenian MP Garo Paylan has announced that he has submitted a legislative proposal to the Grand National Assembly of Turkey for the “Recognition of Armenian Genocide”, “Removal of the Names of Genocide Perpetrators from Public Places” and “Amendment to Turkish Citizenship Law.”

In the general preamble of the law draft, it is stated: “According to a census conducted in 1914, approximately two million Armenians lived in the Ottoman Empire. At the night of April 24, 1915, around 250 Armenian intellectuals, including MPs and writers were arrested in Istanbul.”

“After these people were sent into exile in Ayas and Cankiri, the vast majority of them were killed. Among the ones sent into exile and killed were Dr. Nazaret Dagavaryan (MP of Ottoman Empire), Armen

Doryan (poet and journalist), Shavarsh Krisyan (editor of the sports magazine Marmnamarz), Levon Larents (poet), Rupen Sevag (poet), Yenovk Sahen (theater artist), Siamanto [Atom Yarcanyan] (poet), Hagop Terziyan (pharmacist and writer), Taniel Varujan (poet), Krikor Yesayan (teacher and translator), Rupen Zartaryan (writer and poet), Diran Kelekyan (writer and Professor of Turkish language) and Krikor Zohrab (MP of Ottoman Empire and writer),” the draft reads.

Furthermore, Paylan asks the parliament to confer citizenship on the descendants of those who were forced to leave Turkey or were deported because of the events.

Paylan also demands that a commission to be established to identify the names that were responsible for the deportation of Armenians and to clear those names from public spaces.

Congressman Schiff “Deeply Concerned”

Continued from page 2

out of going from one position to the next as a way of maintaining a continual grip on power. I’m particularly concerned about it because I’ve been working hard to try to gain STEM (Science, Technology, Engineering and Mathematics) funding through the Millennium Challenge Corporation for Armenia and Armenia is right on the cusp of once again qualifying, but the criteria involve democracy and the rule of law and anything that might detract from that means that Armenia will be less likely to get that assistance. I think it would be enormously beneficial if we could help Armenia build a strong STEM program and being able to develop the Armenian economy, tap the intellect of the Armenian people. I’ve always dreamt of Armenia as the Silicon Valley of the Caucasus and this would be a wonderful contribution to that vision. So I am concerned that the current situation in Armenia may harm our chances with the Millennium Challenge Corporation.

MP: Lastly, with election season approaching us, we have noticed a spike in fake news on social media attacking you targeting the local Armenian American community, what are your thoughts on this issue, and how do you plan on combating fake news in general?

CS: It’s a huge problem and I

see both how wonderful social media be. I use it extensively to communicate with my constituents. But I also see how ugly and violent and vile it can often be. You also see the influence of foreign governments using bots to try to amplify their messages to try to get Americans against other Americans. Certainly the Russians did this extensively during our last presidential election. It does make you concerned about the degree to which these bad actors can try to manipulate opinion through social media. I’m often deeply concerned with the posts on my own page that seem either vehemently anti-Armenian or anti-Semitic or just plain nasty and uncivil and it makes you worry about the nature of our discourse. People will say things on social media they will never dream of saying in person, even though they’ve got their face attached to it and their names. This is a real challenge, certainly the social media companies are, I think, becoming far more aware of the problem than they were. We had the testimony of Mark Zuckerberg in Congress last week. I think they operate for a long time thinking that social media was an unmitigated positive and have come to the realization as most of us have that it’s come with some real negative consequences as well and we have got to do our best to mitigate the negative and extenuate the positive.

Pasadena's Armenian Community Commemorates the Armenian Genocide



PASADENA, CA- To commemorate the 103rd anniversary of the Armenian Genocide, the Armenian Council of America (ACA) and Gaidz Youth Organization hosted a ceremony drawing over 200 attendees to Memorial Park.

ACA Board Member Krikor Moloyan eloquently conducted his role as master of ceremonies while providing a thought provoking and historical insight on political dictators and human rights violations throughout the world.

Among the dignitaries present were Scott Svonkin, President of the Los Angeles Community College District Board, Roy Boulghourjian, President of the Pasadena Unified School Board, Teresa Lamb Simpson, representing the office of Congressman Adam Schiff and Arda Tchakian representing State Senator Anthony Portantino.

The evening began with a beautiful dance performance by the Nor Serount Cultural Association dance troupe. Vocalists Harout Hakobyan elated the audience with his patriotic songs as Arthur Hakobyan, also known as "Mister X" mesmerized the crowd with an operatic rendition of Cilicia. Kanon performer Lilit Khojayan and Armen Stepanyan playing the duduk created an ambiance of remembrance and solidarity during the somber occasion.

Carina Cornejo and Angela Pachanian recited poetry for the event as Allison Ghafari and Christine Aghakhanian delivered speeches about the importance of continuing to fight for justice for the Armenian Cause.

The event concluded with a walk to the Armenian Genocide Monument at the north end of the park where flowers and wreaths were placed honoring the 1.5 million Armenians who were murdered during the Genocide.

Gaidz Youth Organization Message Delivered by Alison Ghafari

"Armenia is dying, but it will survive. The little blood that it still has left is precious blood that will give birth to a heroic generation. A nation that does not want to die, does not die" French author Anatole France, in the year 1916, perfectly elaborated the prophecy in which the Armenian people will have accomplished a century after the atrocity of the Armenian Genocide.

The Armenian people have proven that the Genocide has failed by showing resilience and unity with one-another through creating a beautiful culture. Because of the resilience of our ancestors, we are able to stand here today and hold this event to commemorate the fallen of our grandparents generation.

We are able to March for Justice, we are able to have a country of our own, we are able to see many of our brethren establish legacies that will endure beyond lifetimes.

We are able to continue in unity as a culture and fight for the justice of our ancestors.

Since 1915, with hard work, protests, education, advocacy, and most of all- resilience- 30 countries that have formally recognized the Armenian Genocide.

Resilience has also lead to the rebuilding of our beloved country, allowing us to get back on our feet and establish a nation of our own. Allowed



us to protect our lands from those who aspire to destroy us, to annihilate us from our ancestral lands.

Having strong ancestors and a strong generation today we are able to celebrate our beautiful culture that has never been forgotten- from its folk music, to church liturgicals, to its beautiful art.

My generation, as well as my parent's generation, will continue making music, art, as we spread and celebrating the Armenian culture - appreciating and understanding our heritage and history.

The Armenian youth of today, the Armenian youth of tomorrow, will continue the resilience of our ancestors, continue our culture – no matter

ACA Message Delivered by Christine Aghakhanian

Dear ladies, gentleman and honored guests. We are gathered here today, to commemorate the 1.5 million Armenian civilians, dignitaries, clergy, intellectuals, children and elders who were murdered by the Ottoman Turks.

Every year, we join in protest, we join in solidarity, to pay homage to those who perished in the deserts of Deir el Zor, to honor those who survived and thrived and flourished all throughout the world creating, in the words of the great William Saroyan, "A New Armenia."

For one hundred and three years, we have fought for justice for the Armenian Genocide. For recognition and reparations, to move forward as a people so that we may heal the wounds that have been passed down for generations and generations.

Most of the survivors of the Armenian Genocide are gone now, yet their testimonies to the ungodly acts they witnessed by the Young Turks remain etched in our minds and in our hearts. There are dozens of books written and documentaries produced about the Armenian Genocide, most recently the Armenian Council of America screened "Intent to Destroy."

I urge you all to not only watch these documentaries, but to use them as educational tools for your children, your non Armenian friends, neighbors and colleagues. As Armenians, we are ambassadors of our people and our cause.

If the United States government chooses their Geopolitical ally Turkey, over formally re-affirming the fact that is the Armenian Genocide, then it is up to us as global citizens to educate the world and to demand justice from the culprit who today not only denies that a Genocide was committed against Armenians, but has the gall to say Armenians also killed Turks.

The denial machine is active, it is well-funded and every day it works hard to undermine our Cause. That is why we must work twice as hard to shut it down and to show that the truth prevails. No amount of money can change history.

Collectively, our voices are louder, as we are strong and resilient people who have witnessed mass atrocities and have prevailed. As ambassadors of our people only we can seek justice for our cause and fight the denial machine.

You may ask, "How? I'm not a politician or a lobbyist or a millionaire who can influence lawmakers." The answer is very simple. Boycott Turkey – don't support the Turkish economy by buying Turkish products, travelling to turkey or supporting active denialists like TV personality Dr. Oz. This will send a strong message to their lobbyists and their government, the same government which has erected a monument commemorating a fictitious Turkish Genocide committed by Armenians.

As Armenians, we need to be

what part of the world we are in, and most especially we will continue to fight for justice, speak truth to power, not just for the Armenian cause, but for all of humanity.



serious about our cause through actions which speak louder than words, than protests, than cars draped with Armenian flags. In other words, we need to hit them where it hurts – their economy - and each and every one of us has the power to do that.

April is not the only time we need to be activists, we need to be activists every day, in our daily lives through the choices and decisions we make as consumers and as global citizens and as ambassadors of our people.

To the youth I say that we are not victims. We are the children of Haik, the descendants of Tigran the Great, Vartan Mamikonian, Mesrop Mashdots, Paramaz and Monte.

Our ancestors fought countless wars to protect our lands, our identity, our religion, customs and traditions. For centuries we had to fight to protect what was rightfully ours, today we have a part of the Armenian kingdom which once existed and we must do everything in our power to make the Republic of Armenia and Artsakh flourish and ensure that they are democratic and strong.

As many of you know, there are currently protests within Armenia. Today, the Armenian authorities detained the leaders of this peaceful movement. We demand their immediate release. We must make sure that those peaceful protesters who are utilizing their right for free speech are not silenced.

We, as ambassadors of our people, must also continuously advocate that the rule of law, equity and justice are not only things we demand from Turkey, but also be preserved in Armenia and Artsakh.

My final words to you tonight are to never give up. We have accomplished a lot in one hundred and three years, but we still have to continue to fight.

We need to demand justice through our actions, take what is rightfully ours and not be apologetic about our cause by allowing denialists to debate history and cast seeds of doubts in the minds of people who are not familiar with the Genocide.

As ambassadors of our people, only we can seek justice for the Armenian Cause.

Not out of obligation, but because it is in our blood, we are after all the descendants of those who refused to lay down and die, and their resilience continues on through us.

Նշենք Ապրիլ 24ը Եւ Անցնինք Առաջ

ՃՐՏԳ. ՀԱՄԱՐՉՈՒՄ ԱՂԱՇԵԱՆ

Դարձեա՛լ Ապրիլ 24 է:

Մեր ազգի պատմութեան ամէնէն տխուր թուականը, այն սեւ օրը 1915ի, երբ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաք Պոլսոյ մէջ հայ մտաւորականները, երեւելիները եւ ղեկավարները ձերբակալուեցան ու աքտորուեցան՝ իրենց սեւ ճակատագիրին ենթարկուելով: Անոնց շարան-շարան հետեւեցան գաղթականներու կարաւանները, եւ այդպիսով, մէկուկէս միլիոն անմեղ հայեր զոհ գացին թուրքի եսթաղանին:

Այս տարի կրկին պիտի նշենք ու յարգենք մեր սրբացած նահատակներուն յիշատակը, եւ մեր նոր սերունդը տեղեակ պիտի պահենք ու անոր յիշեցնենք մեր հողային իրաւունքները եւ մարդկային կորուստի հատուցման մեր պահանջը. նաեւ պիտի յիշեցնենք ամբողջ աշխարհին, թէ թուրքիան տակաւին կ'ուրանայ Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը եւ միլիոններ կը ծախսէ՝ փորձելով խեղաթիւրել այդ իրականութիւնը:

1915ի եւ անոր յաջորդող տարիներուն տեղի ունեցած Յեղասպանութեան հետեւանքները շատ ծանր ու դառն էին մեր ազգին համար. ամէն ինչի կորուստ՝ տուն, տեղ, հարստութիւն, եկեղեցի, մշակոյթ, եւ վերջապէս՝ Արեւմտեան Հայաստանի դատարկումը իր հայ բնակչութեան: Սակայն, ամենակարեւորը մնաց մեզի. այն էր՝ հաւատքը... հաւատք, որ ազգը կայ, պիտի մնայ եւ պիտի շարունակէ իր երթը մարդկութեան անվերջ ճանապարհին վրայ:

Շատ բան կարելի էր ակնկալել Յեղասպանութենէն փրկուած սերունդէն, սակայն այդ սերունդը իր անկարելին ըրաւ. չյուսահատեցաւ, աշխատեցաւ, նոր օճախներ կազմեց եւ գլխաւորաբար՝ դաստիարակեց ազգային նոր սերունդ մը, որուն պտուղները մեր ազգը քաղեց 1965ին, երբ Հայաստանէն մինչեւ Լիբանան, Միացեալ Նահանգներ եւ ամէնուրեք, ուր հայ կայ, բողոքի ցոյցեր կազմուեցան եւ միաբերան աղաղակներ բարձրացուեցան՝ պահանջելով հայ ազգին իրաւունքները:

Երկրորդ յիսնամեակը պայծառ ու նպաստաւոր կրնար ըլլալ մեր ազգին համար, երբ նոր սերունդներ ծաղկեցան, ազգի երակներուն մէջ նոր արիւն սկսաւ հոսելու եւ երասարդները իրենց


աշխատանքով ազգային կեանքը ճոխացուցին. սակայն դաժան ճակատագիրը կրկին մեզի կը սպասէր. Տոկուն հիմքերու վրայ կառուցուած եւ արմատները ուժգին մխրձած՝ Միջին Արեւելքի ծաղկած հայկական գաղութները, իրարու ետեւէն սկսան քայքայուելու:

Յեղասպանութենէն շատ առաջ կազմուած Եգիպտոսի հայ փաշաներու տասնեակ հազարներու բարգաւաճ գաղութը 1950-60ական թուականներուն քայքայուեցաւ՝ նախագահ Ճամալ Ապտուլ Նասերի ազգայնական եւ ընկերվարական քաղաքականութեան պատճառով, իսկ ներկայիս, Եգիպտոսի հայ գաղութը կը շարունակէ իր գոյութիւնը միայն քանի մը հազար ազնիւ անդամներով: Սուտանի հայ գաղութը աւելի՛ դաժան ճակատագիրի ենթարկուեցաւ. անիկա նախագահ Օմար Պեշրի եւ իրեն նախորդող իսլամական օրէնքները պարտադրող բռնակալ իշխանաւորներու որոշումներուն պատճառով բոլորովի՛ն կորսնցուց իր գոյութիւնը:

Երբեմնի հայկական Սփիւռքի բաբախող սիրտը համարուող եւ Սփիւռքը առաջնորդող Լիբանանի հայկական գաղութը, իր կարգին կորսնցուց այդ հանգամանքը՝ 1970ական թուականներուն երկրի ներքին խռովութիւններուն եւ հակառակորդ կուսակցութիւններուն միջեւ քաղաքացիական պատերազմին իբրեւ հետեւանք. թէեւ Լիբանանի հայ գաղութը ներկայիս եւս կարկառուն գաղութ է, սակայն ան շատ աւելի մեծ, հզօր եւ ազդեցիկ պիտի ըլլար, եթէ իր գաւակները չբռնէին գաղթի ճամբան: Իսկ Անդրանիկ Ծառուկեանի երազային Հայկալը, իր հայկական կրթական բարձր հաստատութիւններով, ազգային միութիւններով եւ քաղաքը շինցնող հայ արհեստաւորներով՝ Սփիւռքի մէջ եփօքը Հայաստան, մըն էր. ան եւս էրտողանի դաւադրութեան եւ իր դաշնակից իսլամական պետութեան, ու իսլամական այլ խմբաւորումներու, պետութիւններու եւ ոչ-իսլամ պետութիւններու մութ ծրագիրներուն ու նպատակներուն զոհ գնաց: Միակ միւթարանքը, որ մեր վիշտը մասամբ կը մեղմացնէ, այն է, որ շատ սուրիահայեր Հայաստան հաստատուեցան:

Պարսկաստանի հարիւրաւոր տարիներու պատմութիւն ունեցող աւանդապահ հայ գաղութը, իր կարգին կորսնցուց իր գաւակներէն տասնեակ հազարներ, որոնք գաղթի ճամբան բռնեցին՝ երկրին

ճակատագիրը որոշող մոլեռանդ «մուլ-լա»ներուն պատճառով: Կրթական, մշակութային, ազգային եւ եկեղեցական աշխույժ կեանք վարող՝ Եփրեմ խանի նման հերոսներու եւ Բաֆֆիի նման անմահներու այդ գաղութը եւս օրէ օր կը մաշի: Միւս կողմէ, իրաքահայ գաղութը, որ իր եկեղեցիներով, միութիւններով եւ հայկական պետականացուած վարժարաններով կրցած էր տարիներ շարունակ հայրենասէր, ազգասէր եւ կրթասէր համայնք մը մէջտեղ բերել, անիկա նոյնպէս քայքայուեցաւ՝ ճորճ Պուշի նման ապիկարի մը որոշումով եւ անոր խամաճիկներուն ձեռամբ:



Իսկ այս բոլորին դիմաց, մեր դարաւոր թշնամին՝ թուրքը, իր հակահայ քարոզչական մեքենան կը զօրացնէ. Սուլթան էրտողան ներկայիս կը հալածէ ու կը ջարդէ իր իսլամ հայրենակիցները՝ քիւրտերը, այնպէս ինչպէս իր նախնիները, քիւրտերուն հետ ձեռք ձեռքի տուած՝ մեր ազգը ջարդեցին: Էրտողան, մոլեռանդ ազգայնամուլ եւ կրօնամուլ նոր սերունդ մը կը պատրաստէ՝ անոնց յիշեցնելով իրենց նախահայրերուն՝ էրթուղ-րուլի, Օսմանի եւ միւս սուլթաններուն փառքերը. ան կ'երագէ նոր սուլթան մը ըլլալ եւ Օսմանեան կայսրութեան օրով գրաւուած տարածքները ետ խլել՝ նոր խալիֆայութիւն մը հաստատելով հոն: Սակայն, այդ բոլորին գիտակից ըլլալով հանդերձ, մենք երբեք պէտք չէ յուսահատինք, որովհետեւ մենք իրաւունքի՛ տէր ենք:

Անտարակոյ, Հայկական Յեղասպանութեան հարցը մղձաւանջ մըն է էրտողանի համար: Մարտ 2018ին, գերմանական «Տէր Շպիկըլ»ը նշեց, թէ էրտողան անձամբ յանձնարարած էր Գերմանիոյ մէջ բողոքի ցոյցեր կազմակերպել՝ 2016ին Պունտեսթակի (Գերմանիոյ խորհրդարան) կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւի ընդունման ի պատասխան. թերթը աւելցուց, որ Գերմանիոյ ոստիկանութիւնը ցնցուած էր այն իրողութեան դիմաց, թէ Անգարա այնքա՛ն շատ կարեւորութիւն տուած էր Հայոց Յեղասպանութեան բանաձեւի

հարցին, որ երկրի նախագահը շահագրգռուած էր անոր ընդունման դէմ բողոքներ կազմակերպելու... Այս՝ միայն մէկ օրինակ:

Պատմութեան ընթացքին հզօր երկիրներ ու կայսրութիւններ ծաղկեցան, ընդարձակուեցան, ապա տկարացան ու կործանեցան, կամ ամենալաւ պարագային՝ իրենց իսկական տարածքներուն վերադարձան: Ուշ կամ կանուխ՝ թուրքիոյ հերթն ալ պիտի գայ, իսկ մենք, մինչ այդ, պէտք է պատրաստ ըլլանք: Ո՞վ կ'երեւակայի Սովետական Միութեան փլուզումը... սակայն, երբ այդ մէկը տեղի ունեցաւ, մեր ժողովուրդը արդէն պատրաստ էր, եւ՝ ազատագրե՛ց Արցախը:

Այժմ ի՞նչ կարելի է ընել...

Վերոյիշեալ մեր հայկական գաղութներու տեղաշարժները եւ տեղափոխումները՝ Միջին Արեւելքէն դէպի Արեւմուտք, մեզ աշխարհագրականօրէն առաւել հեռացուցին մեր պատմական հողերէն եւ օճախներէն, սակայն գաղթի այդ հոսանքներու ամէն տեսակի վնասներուն մէջ նոյնիսկ՝ գէթ շա՛հ մը ունեցանք: Բարեբախտաբար, ներկայիս Սփիւռքի մէջ մենք հազարներով պատրաստուած մասնագէտներ ունինք՝ գիտութեան բոլոր ոլորտներուն մէջ, ինչպէս նաեւ քաղաքական ասպարէզէն ներս. նմանապէս ունինք հսկայ դրամագլուխներով գործատէրեր: Հարկ է այդ բոլորէն օգտուիլ՝ ի շահ Հայաստանի զարգացման եւ

Շար.ը էջ 18

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY




Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՊԱՏՄԵԼ...

ՊՈՎՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

«Մարդ անհատին կեանքը կազմում է պատմություններ է, որ ան ժառանգած ու առած է իր ծնողքին» Սիլվան Ուիթլի Ալպերթ Սթեֆըն փառք ծնած է Անգլիա: Ան Հրեայ է, բայց երբեք չէ ապրած Հրեաստան: Սակայն չի նշանակել, թե ան որեւէ առնչուածութիւն չունի իր երկրին ու հայրենիքին հետ: Սթեֆըն քրիստոնեայ-հրեայ մըն է, եւ իր կեանքը նուիրած է Քրիստոսի եւ Աստուծոյ անուանի քարոզչութեան եւ իր Հրեական քրիստոնեական համայնքին մէջէն՝ «Մեսիական հրեաներ» ուն:

Սթեֆընին հանդիպեցայ Լոզան-Չուիցերիա: Ան ծանօթացած էր տղուս՝ Վահէին, եւ բաւական բան իմացած էր մեր ընտանիքին եւ իմ գործունէութիւններուն առնչուածութեամբ: Փափաք յայտնած էր հանդիպելու հետո, եւ նա մանաւանդ որ ես ալ կը գործեմ միջազգային Քրիստոնեական կազմակերպութեան մը հետ: Բայց չուշացաւ տղուս հարցում ակնարկութիւնը՝ «Պայ կ'ուզե՞ս հանդիպիլ: Կ'ուզեմ որ գիտնաս թէ հրեայ է»:

Հարց մը չի կրցայ տեսնել մեր հանդիպումին մէջ: Եւ երբ ընդունեցի, չուշացաւ տղուս փոքր զգուշացում-գիտաւորութիւնը: «Քաղաքական հարցերու մէջ քիչ մը զգուշ եղիր եւ կամաց գնայ հետը»: Եթէ տղուս դէմքին վրայ կար պզտիկ ժպիտ մը, բայց նաեւ քաղաքավարական ակնարկութիւն մը՝ ընտանեկան մեր հանդիպումը չի վերածելու համար քաղաքական տաք բանավէճի...:

Սթեֆընի տան մէջ ենք, Մարտ 2018: Ան ունի բազմաւնոյն ընտանիք մը: Չորս պատանի-երիտասարդներ եւ բոլորն ալ աշակերտ եւ համալսարանական ուսանողներ: Մեծ աշխատանք տարած է ու տակաւին իր գաւակներուն կրթութեան առնչութեամբ: Իր մանչ գաւակը կ'ուսանի Ժրնեւի համալսարանի մէջ, քաղաքական գիտութիւններու մէջ մասնագիտանալով: Ընթրիքէն առաջ առիթը ունեցայ գրուցելու հետը իր մասնագիտութեանը առնչութեամբ եւ լսելու համար իր հետաքրքրութիւնները եւ տեսակէտերը: Եւ մեր խօսակցութիւնները հասան մինչեւ արաբ-իսրայէլեան ճգնաժամներուն եւ տագնապներուն: Եւ չուշացաւ հարցումս: « Ինչպէս՞ կը տեսնես միջրինարեւելեան տագնապները »:

«Ես աւելի առարկայական եւ գիտական մօտեցում ունիմ այս առնչութեամբ, բայց հայրս աւելի զգացական է», եղաւ իր արագ ակնարկութիւնը: Մէկ նոր տեղեկութիւն մըն ալ աւելցաւ Սթեֆընի մասին, երբ տակաւին պէտք եղած «ուժականութեամբ» չէր սկսած իմ հաղորդակցութիւնը իր հետ:

Ընթրիքի երկար սեղանին նստելու դասաւորումը կատարեց նոյնինքն Սթեֆընը: Եւ չեմ գիտեր եթէ նախօրէ մտածած էր կամ այլ, ինք եւ ես նստեցանք քով-քովի:

Սթեֆընը գիտեր թէ Լիբանանցի եմ եւ Լիբանանահայատակ: Եւ անկախ Կիպրոս նստավայրէն, նաեւ Արաբական մթնոլորտի մէջ մեծացած ըլլալու ու տակաւին ապրելու իմ իրականութեանը: Կրնայի տեսնել, թէ իր դէմքին վրայ կար զգուշաւորութիւն մը, թէ ինչպէս՞ եւ ինչ՞ տեսակի նիւթեր պիտի

սկսի արծարծել հետո: Վերջապէս, կը պատկանինք երկու տարբեր պետականութիւններու, որոնք միջեւ առկայ է «պատերազմական» իրավիճակներ: Եւ ան շատ զգոյշ էր, որ որեւէ մէկ ձեռք ընտանեկան երեկոն չխանգարուէր այլ հրատապ նիւթերով, ուր մեր կեցուածքները կրնային ըլլալ հակադիր...:

Եւ խօսակցութիւնը սկսելու նախաձեռնութիւնը ստանձնեցի ես: «Եփրայէրէն կը խօսիս», եղաւ իմ առաջին հարցումը:

«Ոչ» եղաւ Սթեֆընի շատ արագ պատասխանը: « Անգլիա ծնած եմ եւ առիթը չունեցայ իմ մայրենի լեզուն սորվելու», շարունակեց ան: « Զաւակներս ալ չեն գիտեր »:

Սթեֆըն նշարեց թէ դէմքիս վրայ կար պզտիկ զարմանք մը: Իսկութեան մէջ քիչ մը զարմացած էի, քանի կը լսեմ եւ կը կարողամ, թէ հրեայ հաւաքակառնութիւնները շատ ուշադիր եւ բժախնդիր են այլասերումի մարտահրաւէրին դիմաց եւ թէ անոնք ինչպէս ամէն գնով կը փորձեն կենդանի պահել իրենց մայրենին:

«Բայց դուք հայերն ալ նոյնն է պարագան սփիւռքի մէջ, չէ՞» ըսաւ ան: « Դուք ալ ձեր լեզուն կը կորսնցնէք »:

Սթեֆըն Անգլիոյ մէջ ունեցած է հայ դրացի մը: Հայեր, որոնք հայերէն չէին խօսէր: Այս իմաստով, Սթեֆընի համար հայութիւնը այդքան ալ «օտար» իրականութիւն մը չէր: Գիտցած էր, որ հայկական մականունները ընդհանրապէս «եան»ով կը վերջանան: Համեմատած էր հայկական ճաշերը եւ կրցած էր գիտնալ թէ համեմ տէր կրցած էր նաեւ տեսնել, թէ հայերն ալ սփիւռքի մէջ իրենց մայրենին կը կորսնցնեն եւ թէ ինք միշտակը չէ այս իրականութեանը մէջ: Բայց հետաքրքրական էր, որ չէր իմացած թէ ինչու՞ հայր սփիւռքի մէջ է եւ թէ ինչ՞ էր հայուն պատմութիւնը: Ու չուշացաւ նաեւ իմ ներքին յոսատաբանութիւնը: Թէ ինչու՞ հայ դրացին չէր պատմած իր հայուն պատմութիւնը Սթեֆընին:

Ամբողջ ընթրիքի ընթացքին կարծէք Սթեֆընը եւ ես անջատուած էինք մեր ընտանիքի մնացեալ անդամներէն: Չէինք ալ լսել, թէ ինչ՞ նիւթեր կ'արծարծուէին սեղանին միւս կողմը: Սթեֆընը մտիկ կ'ընէր իմ հայուն պատմութիւնը: Եւ սկսայ իրենց պատմել թէ ինչու՞ իր հայ դրացին Անգլիա հասած է ինչպէս եւ Պէյրութ: Եւ թէ իմ մեծ ծնողքս ու ծնողքս ինչպէս՞ պատմական Հայաստանէն իրենց ակունքներէն արմատախիլ եղած էին եւ հասած՝ Հալէպ եւ ապա Պէյրութ: Ու տակաւին ցեղասպանութեան անաւորութիւնը եւ իմ ընտանեկան պարագաներու քսան եւ հինգ անհատականները: « Բոլորին նկարները ունիմ իմ ընտանեկան հաւաքածոյին մէջ » ըսի Սթեֆընին:

Եթէ Սթեֆըն տակաւին կը պահէր իր զգուշաւոր կեցուածքը իմ նկատմամբ, բայց սկսած էի տեսնել անոր աչքերուն մէջ հասկացողութիւն եւ ճանաչողութիւն: Սկսայ նաեւ տեսնել, թէ Սթեֆըն կամաց-կամաց սկսաւ հաղորդակցութեան աւելի հանգիստ կամուրջներ ստեղծել ինծի հետ: Իմ հայուն պատմութեան մէջէն Սթեֆըն կրցաւ ինք իր անձը տեսնել եւ աւելիով

կրցաւ կամրջել իր պատմութիւնը իմ պատմածիս հետ: Չէ՞ որ ինք ու իր ժողովուրդն ալ անցած է այդ անաւոր ողբերգութենէն: Հրեական ողջակիցումէն: Եւ այդ գիշեր, իմ պատմութեանս մէջէն Սթեֆըն տեսաւ իր պատմութիւնը: Եւ իմ ու իր պատմութիւնները կարծես ներշնչեց Սթեֆընը եւ մենք աւելի լաւ կրցանք զիրար հասկնալ:

Մեր մեկուսի խօսակցութիւնները տեղ մը պէտք էր ընդմիջէինք: Վերջապէս կարելի չէր լման անջատուիլ մեր ընտանիքներէն: Արաբ-իսրայէլեան նիւթերուն ու այդ «տաք» խօսակցութիւններու մէջ մտնելու առիթը չեղաւ: Հայկական ինքնութիւնը եւ հայուն ցեղասպանութիւնը իսկեք մեր խօսակցութեան գլխաւոր առանցքը: Եւ հայուն ցեղասպանութեան իրականութիւնը կամրջուեցաւ հրեական ողջակիցումին հետ: Եւ մենք երկուքս այդ երեկոյ զիրար աւելի լաւ հասկացանք: Երկու տարբեր ինքնութիւններ, որոնք ապրած են պատմութեան նմանօրինակ փորձը եւ այսօր տակաւին կը տքին իրենց սփիւռքեան իրավիճակներու մէջ, իւրաքանչիւրը իր պարունակին մէջ եւ իւրաքանչիւրը իրեն յատուկ մարտահրաւէրներով...:

Բայց կայ ներկայ օրերու մէկ մեծ մարտահրաւէրը: Եւ այդ հայուն պատմութիւնն է: Եւ նոյն այդ պատմութիւնը պատմելու գրաւականը: Երբեք չմտաբերենք թէ աշխարհ ամբողջ լսած է «հայուն պատմութիւնը»: Նոյնիսկ երբ նոյն այդ պատմութիւնը ճանաչողութեան անցած է պահանջատիրութեան պարունակին: Տակաւին շատ են անոնք որոնք չեն լսած եւ անհրաժեշտ է որ նաեւ լսեն:

Իսկ թէ ով՞ պիտի ըլլայ

պատմողը: Պիտի ըլլամ ես, դուն եւ իւրաքանչիւր հայ:

Որովհետեւ...:

Ինչքան որ ցաւալի է ու տխուր եւ դժուար, բայց այս պատմութիւնը Մերն է՝ Հայուն պատմութիւնն է: Եւ այս պատմութիւնը մենք ժառանգած ենք մեր ծնողքէն ու տակաւին մեծ ծնողքէն, եւ անոնցմով այս նոյն պատմութիւնը դարձած է ՄԵՐԸ՝ իմը՝ Հայունը: Եւ մեր պատմութիւնը եթէ պիտի պատմենք մեր գաւակներուն, որովհետեւ տեսնուած ու փաստուած է, թէ պատմութիւնը պատմելով է որ կ'օգնես անհատին՝ լսողին, որպէսզի ինքզինքը արժէտորէ եւ իր ինքնութիւնը գտնէ (Ռ. Աթքինսըն, 1995): Ու տակաւին պիտի պատմենք մեր հայուն պատմութիւնը օտարին եւ ուրիշին: Եւ ուրիշին պատմելով ոչ միայն կը ծանօթացնես քու պատմած պատմութիւնը, բայց նաեւ միջոց կ'ըլլաս իթանելու եւ ներշնչելու գանոնքի մամա՝ ուրիշները, քո նոյնինքն պատմած պատմութեան բովանդակութեամբ (Աննա Ունաբովիչ, 2011): Եւ մեր հայուն պատմութիւնը ստեղծուած ու հնարուած պատմութիւն չէ, այլ՝ իրական, ճշմարիտ ու տակաւին արդարութեանը հասնելու համար իր մղած պահանջատիրութեան արժանահաւատութեամբ:

Բայց կայ տակաւին անհատական ու անձնական իւրաքանակութիւնը: Եւ պատմութիւնը պատմելով է, որ անհատը իմ մամա՝ պատմողը, կը ստեղծէ եւ կը վերստեղծէ իր ինքնութիւնը (Սիլվան Ուիթլի Ալպերթ, 1996): Ինչքան որ դժուար է ու ցաւոտ, բայց նոյն այս դժուար ու ցաւոտ մեր պատմութիւնը պատմելով է, որ մենք պիտի կերտենք

GARNI

Nourish your hair with natural products

GARNI

GARNI

www.GarniUSA.com
Pasadena, CA 91102, USA

ԳԻՇԵՐԱՏԱՐԸ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Իսկապես տարօրինակ մարդիկ կան, ընդհանրապես նրանք են այդպես, որ մեկուսացած կեանք են ապրում շփումից ու յարաբերութիւնից հեռու իրենց սիրածն ու մտածածը ընդունելի առանց քննարկելու ենթակայ, մի բան էլ որ ասում կամ գգուշացնում, յորդորում ես, բռնկում եւ լարում են ասելով։- Իմ կեանքն է՝ ձեզ ինչ... Չորքոտանի կենդանի է՝ պահում, թող պահի, խնամի, բայց ոչ թէ դարձնէ ընտանիքի անդամ եւ հողով-սրտով նրանով տարուի, զբաղմունքի բարեսիրական եւ օգտակար միջոցներ շատ կան թէ՛ հոգին է ազնուացնում, թէ՛ միտքն է զարգացնում: Կամ այն հայ երիտասարդը, որ մարմինը լրիւ գլխի մազից մինչեւ վարչապարը կտում է, դաջում է զարդանկար շղարշի պէս, դրան ինչ կ'ասէք, նմանուելով նախազգարուած խեցիկ,եթէ կարիք լինէր Աստուած մարդուն այդ օրինակ կ'ստեղծէր...Մի առած կայ՝ ինչ որ բնական է՝ բարոյական է եւ գեղեցիկ: Կամ այն կինը գիշերատար՝ անդորր է խանգարում եւ մտատանջութիւն առթում, անշուշտ իրենց գիտենալիքն է եւ ապրելիքը, այդուհանդերձ մարդն ազատ է իր ապրելակերպով, բայց ոչ այլոց ներդրման պատճառով, կամ ոչ վատ սովորութեանց օրինակ դառնալով: Այս մէկի պատմութիւնն որ անում եմ պատմողի ընտանիքին ներդրման է հասել միլիցիա կանչելով:

Կիսաքուն վիճակումն էի, զգացի կինս սենեակից դուրս գնաց եւ փսփոց լսեցի, չհամբերեցի, տեսայ կինս եւ աղջիկս պատուհանի ծածկոցից դէպի դուրս ծիկրակում են, ժամացոյցը առաւօտուայ 3.30-ն էր ցոյց տալիս, աղջկաս հարցրի.

-Ի՞նչ էք անում պատուհանի մօտ.

-Տե՛ս, պա՛պ, էդ ինքնաշարժը ինչքան ժամանակ է, մեր դարպասի դիմացը լոյսերը վառ դէպի մեր բակը ուղղած, կանգնած մնացել է եւ չի էլ շարժւում, մերթ իջնելով ցանցից դէպի բակն է նայում, չենք իմանում նա ինչ է ուզում, նա կին է, մի տեսակ է թւում՝ խմածի նման...

-Միլիցիա կանչել է՞ք.
-Այո՛, սպասում ենք, որ գայ:

էդ վիճակում, չէր կարելի մենակ թողնել մերոնց, սպասեցի միլիցիայի: Միլիցիան չեկաւ ու չեկաւ, գոնէ մենք չտեսանք, ինչո՞ւ չեկաւ, պատճառը չիմացանք, մենք էլ չհետապնդեցինք, դէպքը խաղաղ վերջ գտնելու համար: Նա ինքնաշարժի լոյսերը անընդմէջ վառում եւ անջատում էր: Մտքովս անցաւ, որ նա մեզ է կանչում, գաւազանը ձեռքս առայ, որ գնամ, աղջիկս զգուշացրեց.

-Պա՛պ մի՛ գնայ, կարող է՛ վտանգաւոր լինի.

-Մի՛ վախենայ, զգո՛յշ եմ, փայտ կայ՝ ձեռքիս:

Շէնքից դուրս գնալիս, աջ կողմումս պատշգամի սիւնի մօտ մի անծանօթ կատու նկատեցի, (մեր դրացի կատուները գիշեր-

ները մեր հողոտ բակը դարձրել են ճնճուղ որսալու համար, լաւ ճանաչում եմ նրանց), անուշադիր նրան դէպի դարպասը մօտեցայ, որը շղթայով կողպուած էր, տեսայ կինը մեքենայից իջնելով ցանցի ետեւից ամբերիկեան ոճի անգլերէնով վռագ ինձ ասաց.

-Կատուս եմ փնտրում, նա էս բակումն է եւ սկսեց կանչել.

-Buzzte~r, buzzfer...:

Կատու լսելիս միտքս զնաց այն կատուին որ տեսել էի, նրան թողնելով գոց ցանցի ետեւը դարձաւ դէպի կատուն գնացի, բայց նա ուրուրի պէս աներեւակայելի վազքով աջ կողմից դէպի ձախակողմեան մեր մեքենաների տակ մտաւ բոլորովին կարեւորութիւն չտալով կնոջ շարունակական կանչերին եւ աներեւութացաւ, մօտեցայ իրեն ասելով.

-Եթէ քո ընտելացած կատուն է, ինչո՞ւ քո մօտ չեկաւ, նա ոչինչ չպատասխանեց, անցնելով մեքենայի մէջ մի կտոր ավի չափ թուղթի վրայ իր հեռախօսն ու անունը, նաեւ կատուի անունը գրած տուեց

ինձ ասելով.

-Եթէ տեսաք կատուին ձեր մօտ, գանգէք, գամ, տանեմ:

Փողոցի սիւնի լոյսի տակ կարդացի թղթի վրայ Alice, կատուի անունն էլ նոյնը, որ կանչում էր, իսկ հեռախօսի ծածկագիրը (906): Կնոջ դէմքին քննական նայեցի ճանաչելու համար, մտածելով կարող է հարեւան լինի, բայց այդպիսի դէմք մեր փողոցում ծանօթ չէր, հեռախօսի ծածկագիրն էլ հեռաւոր քաղաքի պատկանող, կինը մուգ գոյնի շոր էր հագել տաբատով՝ վզին էլ շալ, միջին հասակից բարձր, դէմքը լաւ չէր երեւում, մեքենան մեծ էր, ներսը անտես, կարծեմ Jeep էր, պատասխանելով իրեն ասացի.

-Շատ բարի կը գանգեմ:

Նա նստեց մեքենան եւ հեռացաւ: Այդ կինը գիշերուայ այդ ժամին կասկածներ արթնացրեց իմ մօտ, եթէ մօտիկ հարեւան լինէր, կարելի է մարդ օգնէր եւ ներս հրաւիրէր, բայց չարեցի, ինք էլ չառաջարկեց զգալով մեր զգոնութիւնը: Ես այդ ժամին անծանօթի դիմաց դուռ չէի բացի, հարցը իմ մէջ վերլուծելով այն եզրակացու-


թեան հասայ, թէ ինչպէս այդ կատուն մեր բակում էր յայտնուել առանց այն որ փողոցի հարեւան լինի, եթէ իսկապէս կապուած էր իր կատուին, որ գիշերուայ այդ ժամին դուրս էր եկել նրան վերադարձնելու, իմ ներկայութեան վռագ չէր թողնի եւ հեռանար, կը մնար մի ելք փնտրելու իր կատուն ձեռք բերելու համար, ուրեմն կատուն ինք էր բաց թողել մեր բակը յետին նպատակի համար: Նա նկատելով որ բնակարանում տղամարդ եւ շունչներ են ապրում սուս ու փուս թողեց եւ հեռացաւ, հէնց այդ գնալն եղաւ, համարն ստուգեցինք, կեղծ էր: Ահաւասիկ սա էլ այս տեսակ իբր չորքոտանու սիրահար, բայց խարդախ մարդ, որ մեր խաղաղ գիշերուայ քունը տագնապի վերածեց, լաւ է մեր զգուշութեան շնորհիւ փորձանքից հեռու մնացինք:

Յիշեցի հանգուցեալ մօրս, որ երբեմն փորձանքից հրաշքով փրկուելու դէպքում ասում էր. «Բայէ՛ս, տես ինչ բարի գործ ես արել, որ բարի ոգիները քեզ պաշտպանում են»:

«Գիշերատար=լուսանալուն չսպասող

ՊՈԼՍԱՅԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ
Կը ներկայացնէ

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ ԴՈԿՏ. ԵՔԹԱՆ ԹԻՒՐԵԵԸԼՄԱԶԻ
հետ
“ՉԱՅԵՐՈՒ ԶԱՅՆԱԳՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԶԱՅՐԵՆԻՔԵՆ ՄԻՆՉԵՒ ՍՓԻՒՌԵ”



Այս դասախօսութիւնը պիտի հետախուզէ Չայոյց բազմաշերտ ճամբորդութիւնները՝ երաժշտական պատմութեան մէջ Օսմանեան կայսրութենէ մասնաւորապէս, դէպի Միացեալ Նահանգներ մինչեւ 20-րդ դարու առաջին կէտը, որպէս երաժշտներ, արտադրիչներ եւ առեւտրականներ: Նկարելով Օսմանեան կայսրութեան եւ սփիւռքի այլ վայրերուն մէջ արտադրող առեւտրային գրառումներու պատմութիւնները եւ օրինակները: Դասախօսութիւնը կը ներկայացնէ երաժշտական արտադրութեան փոխարինող ոճերը, բովանդակութիւնը եւ լեզուական օգտագործումը ընդդէմ տեղադրութեան, ողբերգութեան եւ լսարան / մշակութային երկիսութեան, Չայոյց պատմութեան ամենասկզբնական շրջաններէն մէկուն մէջ: Չորոյցը յատկապէս պիտի ընդգծէ հայկական համայնքներուն մէջ մշակութային, քաղաքական եւ նոյնական թէքնոլոճիի ձայնագրման յառաջացման հետեւանքները:

Ուրբաթ, Մայիս 4, 2018 երեկոյեան ժամը 7:30ին
Պոլսահայ Միութեան Կեդրոնը
Մուտքը ազատ Զիւրասիրութիւն

Դոկտոր Թիւրքէլմազը ստացած է Դոկտորական Մագիստրոսը Մշակութային Մարդաբանութեան Բաժնին մէջ՝ Տիւրք Չամալսարանէն: Ան դասընթացքներ կազմակերպած է Կիպրոսի համալսարանին, Սապանճըի, Տեղեկութիւններու եւ Տիւրքի համալսարաններուն մէջ՝ ելոյթ ունենալով հաւաքական բնութեան բանավեճերու շուրջ, քննարկումներու եւ հաշտեցման, ինչպէս նաեւ երաժշտութեան, մշակոյթի եւ քաղաքականութեան շուրջ: Թիւրքէլմազը ներկայիս Ֆրեզնոյի Պետական Չամալսարանի Խանգատեան Չայկական Ուսումնասիրութիւններու այցելու Փրոֆ. Է: Ան նաեւ գիտաշխատող է Ֆորուսի Transregionale Studien Պերլին, Գերմանիա: Մինչ այդ՝ ան կ'աշխատի իր մատենաշարին վրայ, իրմուտելով իր փորձին վրայ, 1913-1915 թուականներուն Արեւելեան Անատոլիայի բնութեան եւ խոռվութեան մասին, 20-րդ դարասկզբին Արեւելեան Օսմանեան շրջաններուն մէջ հակամարտութեան եւ անոր շուրջի յիշողութեան քաղաքականութեան:

Դասախօսութիւնը պիտի կատարուի Անգլերէնով
Բացատրական մեկնաբանութիւնները՝ Գայերէնով:
Չայուգ՝ 19726 Sherman Way, Winnetka, CA 91306

1913-1916 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ ԹՈՒՐԲԱՅՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԳԱՆՔՆԵՐԻ ԴԵՄՊԱՆ ՋԵՆՐԻ ՄՈՐԳԸՆԹԱՈՒ-Ի ՅՈՒՇԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԱԼԵԱԹԻ ՀԵՏ

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Ըստ դեսպան Մորգընթաուի հրատարակած յուշերի, 1915 թվականի սկզբներին դեսպանատունն հասել էին Թուրքիայում հայերի հանդէպ կատարուած սարսափազդու դէպքերի մանրամասնութիւններ ու պատահածի իսկութիւնը հաստատող վկայութիւններ: Նոյն թվականի Յունուար-Փետրուար ամիսներին դեսպանատունը հասել էին նաեւ «Ուրմիայ»-ի տեղեկագրերը: Թալեաթ ու էնվէր ժխտել էին նրանց իսկութիւնը, այն նկատել որպէս անմիտ չափազանցութիւններ: Մորգընթաուն տեղեկացուած եղել վանայ «չփոթութիւններ» մասին: Թալեաթ ու էնվէր յայտարարել էին, որ պատահածները «խուժանի» ծայրայեղութիւններ էին, խոստացել՝ անմիջապէս մարել այն: Թուրք կառավարութիւնը ջանացել էր նման տեղեկութիւնները երկար ատեն գաղտնի պահել արտաքին աշխարհից, հայերի բնաջնջումը կատարուելուց յետոյ միայն իմացուէր՝ Եւրոպայում ու Ամերիկայում:

Ըստ Մորգընթաուի յայտնածի, «Ապրիլի վերջին», Պոլսում ձերբակալուել էին շուրջ երկու հարիւր ու ավելի հայեր, զրկուել երկրի ներսերը: Դեսպանի իմացածի համաձայն, նրանցից շատերը ընկերային ու նիւթական տեսակէտով երկրում կարեւոր դիրքերի տիրելու եւ որ նրանցից շատերին անձնակազմ ճանաչում էր: Կարեկցանքի դիմումները արեւադարձի կողմէն Թալեաթին: Դեսպանին պատասխանել էր, որ Պոլսոյ կասկածելիները Ռուսիոյ հետ իրենց յարաբերութիւններով կարող էին կառավարութեան դէմ ապստամբութիւն կազմակերպել: Թուրքիան ամենապահանջու էր համարել նրանց Անգարա եւ ուրիշ քաղաքներ ճամբելը: Թալեաթ ժխտել էր, որ Հայ ազգաբնակչութեան վտարումը կանխամտածուած ծրագիր էր, հաստատել՝ հեռացուածները նեղութիւն պիտի չկրէին:

Երկրի ներսից դեսպանատունը հասնող լուրերը մտահոգել էին Մորգընթաուին: Դաշնակիցների նաւատորմի զորքերը մինչեւ Տարսանէլի նեղուցից հեռանալը, արդէն տեղեկացուել էին, որ երկրում հայերի հանդէպ անբնական բռնարկ էին տեղի ունենում: Դաշնակիցների նաւատորմի զորքերը Տարսանէլից հեռանալուց յետոյ, հայերի բարեկամներ՝ Անգլիան, Ֆրանսան այլեւս անկարող էին հայերուն օգնութիւն ցուցաբերել: Մորգընթաուն, տարբեր բովանդակութիւնների հեռագիրներ էր ուղարկել Թուրքիայում գործող իր երկրի հիւպատոսներին: Տեղի ունեցած դէպքերը քողարկելու համար, Թուրքիայում խիստ գրաքննութիւն էր սահմանուել, դժուարացել էին ուղեւորութիւնները դէպի երկրի արեւելք: Ամերիկեան հիւպատոսներ ու միսիոնարներ յաջողակութեամբ էին Պոլսոյ իրենց դեսպանատուն փամբանել: Դեսպանին ներկայանալով, արցունքոտ աչքերով պատմել էին անձամբ վկայ եղած զարհուրելի տեսարաններին, որոնցից այնքան ազդուած էին եղել, որ հիւանդացել էին:

Նրանցից ոմանք, տարբեր

հիւպատոսներից նամակներ էին բերել, որոնց սարսափահար մանրամասնութիւնները հնարաւոր էր հրապարակել: Մորգընթաուն, այդ բոլորից եզրակացրել, որ հայերի հանդէպ թուրքերի անգթութիւնը անսահման էր: Հիւպատոսները Մորգընթաուին դիմել էին, որ ուրիշ յոյս չկար՝ մտաւորապէս 2,000,000 հայերը ջարդերէ, անթուղութիւնէ փրկել, եթէ ոչ՝ միայն «Միացեալ Նահանգների բարոյական ազդեցութիւնը»: Հայերի բանագնացները յայտարարում էին եթէ ամերիկեան դեսպանատունը չկարողանար համոզել թուրքերը՝ «սանձ» դնելու իրենց վայրագութիւններին, ապա ամբողջ մի ցեղ սպանուելու էր: Ամերիկացի ու Գանատացի միսիոնարներ եւ նոյնիսկ նրանց զերման որոշ պաշտօնակիցներ խնդրել էին Մորգընթաուին՝ միջամտել: Գերման միսիոնարներ մեղադրել էին իրենց հայրենիքը, նման անբարոյ ժողովուրդի դաշնակիցը լինելուն: Իմանալով, նման դէպքերի հանդէպ Գերմանիայի չէզոք դիրք գրաւելու մասին, յայտարարել էին՝ միայն Ամերիկան կարող էր հայերի ջարդերը կասեցնել:

Ըստ Մորգընթաուի յուշերի, Թալեաթ յայտարարել էր, որ որպէս պետութեան ներքին խնդիր, իբր ոչ ոք իրաւունք ունէր միջամտելու իր հպատակների հանդէպ կատարուած արարքների համար: Մորգընթաուն իր յուշերում խոստովանել էր, որ քանի դեռ նման վարմունքից իր երկրի ու նրա մարդկանց շահերը չէին վնասուել, ինք ուղղակի չէր միջամտել տեղի ունեցած դէպքերին: Արդեօք դեսպանի երկրի շահերից չէ՞ր, որ նպաստել, թէ՞ հրահրել «Արաբական Գարուն» անուան տակ երկրների քանդումը: Իրենց երկրի տնտեսական, աշխարհաքաղաքական շահի, քարիւղի հանքերի տիրանալու համար միջամտել էին ուրիշ շատ երկրների ներքին գործերին, գէնք տրամադրել հակադիր կողմերից մէկին, դրացի կղզի երկրի հանդէպ երկարամեայ տնտեսական շրջափակում իրականացնել, իրենց շահերին հակառակող պետութիւնների հանդէպ տնտեսական պատժամիջոցներ կիրառել, որոնցից խիստ տուժում էին նրանց մարդիկ, սպանուել ու փախստական դարձել միլիոնավորներ: Այդ ինչ շահերից է, որ մինչեւ հիմա էլ ժխտում են, որ իրենց դեսպանի նկարագրած թուրքը՝ իր իսկ հպատակների ցեղասպանութիւն էր իրականացրել: Մորգընթաուին այցելած երկու միսիոնարներ՝ նրան հաղորդել էին Գոնիայի գարհուրելի դէպքերի մասին, նրանց ունկնդրելուց յետոյ Մորգընթաուն, ուղղակի Բ. Դուռն էր գնացել: Առաջին «ակնարկով» տեսել, որ Թալեաթը իր վայրագ տրամադրութեան մէջ էր գտնուում: Նրա հետ այլ հարցերի մասին խօսելուց յետոյ, Գոնիայի հայերի դէպքերի վիճակի մասին էր սկսել խօսել: Մորգընթաուն հագիւ իր առաջին խօսքն արտասանել, նա կռուարարի վարմունք ցուց տուել, աչքերը բոցավառած, ծնօտները սեղմած, դէպի իրեն ծռել, կտրուկ շեշտով բացականչել՝
- Ամերիկացի՞ ես անոնք, չենք կրնար հայերուն վստահել, անոնց հանդէպ մեր վարուելակերպը Մի-

ացեալ Նահանգների գիտնալիք բանը չէ:

Մորգընթաուն, խօսքը շարունակելով աւելացրել, որ Թուրք-իային իրենց բարեկամը նկատելով հանդերձ, վրդովուած են հայերի հետ կատարուած վարմունքից: Թալեաթ, գլուխը օրօրելով, մերժել էր շարունակել այլեւս այդ մասին խօսել: Հայերին բարեխօսելու համար Թալեաթի հետ Մորգընթաուի տեսակցութիւնը դրական արդիւնք էր տուել: Խոհեմ էր համարել Թալեաթի հետ մի այլ տեսակցութեան ատեն, նրա լաւ տրամադրութեան պահին, նորէն խօսել հայերի հարցի շուրջ:

Թալեաթի հետ Մորգընթաուի ուրիշ տեսակցութեան ատեն, բացել էր իր սեղանի գզրոցը, մի բուռ հեռագիրներ հանել, այն վերել ճոճելով բացականչել՝

-Ինչո՞ւ համար այս դրամը մեզի չէք տար, կատակելով ասել էր:
-Ինչ դրամ, հարցրել էր Մորգընթաուին: Թալեաթը ցոյց տալով հեռագիրները մէկը, պատասխանել.

-Ամերիկացից, հայերու համար խոշոր գումարներ են դրկում ձեզի, այն լաւագոյնս գործածելու համար, մեզի յանձնեցէք, մենք նրանց չափ դրամի պէտք ունինք:

Մորգընթաուն առարկել էր, որ նման բան էր ստացել: Թալեաթ հաւատացրել էր, որ դրամը պիտի գար: Ճիշտ էր Թալեաթը: Պոլիս հասած հեռագիրները, մինչեւ հասցեատերերին յանձնուելը, նրան էին ներկայացուում, բոլորը կարգում էր, նոյնիսկ եթէ ուրիշ երկրների դեսպանատներին ուղարկուած լինէին: Մորգընթաու չէր բողոքել, յարմար առիթ էր համարել արգիլուած նիւթի շուրջ նորէն խօսք սկսել:

Ուրիշ հանդիպումների խօսակցութեան ատեն, Թալեաթ դժգոհել էր Մորգընթաուի կողմից հայերու հանդէպ եղած շահագրգռուածութիւնից, առարկել էր, որ հայերը ռուսների հետ մշտական յարաբերութիւնների մէջ էին: Մորգընթաու, Թալեաթի հետ վարած խօսակցութիւններից այնպէս էր տպաւորուել, որ նա հայերի ամենից անոգոք թշնամին էր, յուշերում գրել՝ «Թալեաթն է այս խեղճ մարդոց տառապանքների ամենակատաղի թելադրիչը»: Թալեաթ, Մորգընթաուին բացատրել, որ հայերի հանդէպ իրենց վարած քաղաքականութիւնը՝ կառավարութեան պաշտօնական քաղաքականութիւնն է, եւ թէ «Տարագրութիւնները ամապարանքով որոշուած արարքներ չէին, այլ՝ արդիւնք երկար ու լուրջ խորհրդակցութեանց»: Թալեաթ, գայրագիտու ու մերժողական շեշտով պատասխանել Մորգընթաուի կողմից ի նպաստ հայերի եղած դիմումները. աւելացրել, որ մի օր դեսպանի հետ բովանդակ հակական խնդրոյն մասին կը խօսէին, յետոյ էլ ցածր ձայնով թուրքերէն ասել, «այդ օրը երբեք պիտի չգայ»: Թալեաթ շարունակել խօսքը՝

-Եւ յետոյ, Դուք ինչո՞ւ համար հայերով հետաքրքրուած էք, Դուք հրեայ էք, այս մարդիկը՝ Քրիստոնեայ հայեր: Մահմետականները ու հրեաները շատ լաւ են յարաբերուում իրարու հետ: Գանադատելու ինչ ունէք: Ինչո՞ւ համար չէք թողնում նրանց հանդէպ մենք մեր ուզածը անենք:

Մորգընթաու գրել էր՝ Թալեաթի այդ միտքը, թուրքի մտայնութեան արգասիքն էր: Թուրքերը չէին կարող դատել, որ ցեղից,

կրօնքից գատ այլ գաղափարներ էլ գոյութիւն ունէին՝ արդարութիւնը, մարդասիրութիւնը, քաղաքակրթութիւնը:

Մորգընթաու պատասխանել էր, որ ինք այստեղ չէր գտնուել Հրեայի հանգամանքով, այլ՝ իբր Ամերիկեան դեսպան, որ իր երկրում բնակուած են 97 միլիոն քրիստոնեաներ եւ 3 միլիոն հրեաներ եւ որ ինք իր տիպոցով ներկայացնում է եւ քրիստոնեաներին ու հրեաներին եւ որ նրան դիմած էր եղել յանուն ցեղի կամ կրօնքի, այլ յանուն մարդասիրութեան: Թալեաթ առարկել էր, որ իրենք լաւ էին վարուած ամերիկացիների հետ եւ վերջապէս ինչի համար էր նա գանգատուած:

-Այդ հալածանքները, պատասխանել էր Մորգընթաուն, ամերիկացիների հանդէպ անարգանք է: Անհրաժեշտ է մարդասիրական սկզբունքներով վարուել, չհիմնուել ցեղի ու հաւատքի տարբերութեան վրայ, թէ ոչ՝ Միացեալ Նահանգները ձեզի իբր բարեկամների հաւասար կողմ չեն նկատուել: Դուք արհամարուած էք ամերիկացի միսիոնարները, նրանք գնահատուած են մեր երկրում: Նրանք նիւթապաշտներ չեն, համոզուած այլասէրներ են, արդարութիւնը ու քաղաքակրթութիւնը տիեզերական օրէնքն են: Ասում էք, պատերազմում յաղթանակած լինելու դէպքում ամբողջ աշխարհը պիտի արհամարէք: Մորգընթաուն առարկել էր, որ Ամերիկեան ժողովուրդը երբեք պիտի չմոռնայ այս ջարդերը, Թուրքիայի քրիստոնեաներուն այս գարշելի եւ կանոնաւոր քանդումը: Ռճրագործներ պիտի նկատէ նրանց, ովքեր պատասխանատուներ են: Դուք այլեւս պիտի չկարողանաք խուսափել այն պատասխանատուութիւնից, թէ ձեր պարտքը շարժած է ներքին գործոց նախարարի հանգամանքով եւ երբեք ոչ իբր Թալեաթ: Մորգընթաուի դիտողութիւնները նրան վիրավորական չէին թուացել, չէին այլափոխել նրան, անշունչ հակի նման լսել էր խօսակցին: Շրջանցելով դեսպանի առարկումները, Թալեաթ մի ուրիշ հանգամանքի էլ էր անդրադարձել.

-Հայերը, ասել էր նա, մերժել էին իրենց գէնքերը յանձնել, վախում ու Զէյթունում դիմադրեցին իշխանութեանը, նրանք ռուսների դաշնակիցներն են: Ինչքան իս պաշտպանելու համար միակ միջոց մը կայ՝ տարագրութիւնն է այդ:
-Ենթադրենք, թէ մի քանի հայեր դաւաճանած էին ձեզի դէմ, այդ պատճառ չէ, որ դուք ամբողջ ցեղը փնտրեցէք, կիններն ու մանուկները չարաբէք, առարկել էր Մորգընթաուին:

-Այդ անխուսափելի էր, պատասխանել էր Թալեաթը:

Թալեաթին նման հարցում յղած էր եղել նաեւ «Պերլինէր Թակէպուլաթ» լրագրի թղթակցը. Թալեաթ առարկել,

«Մեր երեսին են տալիս, թէ մենք տարբերութիւն չենք դնում անմեղ ու մեղաւոր հայերի մինչեւ, այդ անկարելի էր, որովհետեւ այսօրուայ անմեղները վաղուան յանցաւորները պիտի լինէին:

Թալեաթին հաճոյ չէր եղել այդ խնդրի շուրջ խօսելու, քանի որ դեսպանատան այն պաշտօնեան որ կողմերի միջեւ գորոցների թարգմանի պաշտօնն էր կատարում՝ Հայ էր եղել:

Թալեաթ, Մորգընթաուին

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԵՂԲՕՐ՝ ՅԱԿՈԲ ՓԻՆԵՃԱՆԻ, ԼՈՒՍԱՊՈՒՅԾԱՌ ԵՒ ԱՆՍԵՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գրեթէ տարի մը առաջ, Ապրիլ 24, 2017ին, կորսանցովինք քեզ, սիրելի՛ եղբայր, եւ տակաւին նոյն ցաւն ու վիշտը կը տիրէ մեր սիրտերուն մէջ: Օրէ օր կ'աւելնայ նաեւ քոյրերուս եւ իմ մէջ մեր սէրն ու կարօտը՝ աննման մեր եղբոր հանդէպ: Մեծագոյն կարօտով քեզ կը փնտռենք միշտ, կը սիրենք քեզ անյազ սիրով, քանզի քու ներկայութեամբ, աննման եղբոր կերպարով, դուն դարձար ծնողք՝ բառին ամբողջական իմաստով, կատարելով թէ՛ հօր եւ թէ՛ եղբոր պարտականութիւնները:



Խոհուրդն ու ինքնամփոփ թանկագին մեր եղբայրը եզակի անհատականութիւն էր, որուն հոգիի ծալքերուն մէջ անթեղուած կար խորը մարդասիրութիւն: Իր ճշմարիտ հայրենասիրութիւնը խօսքէ աւելի՛ գործով, նուիրումով եւ նուիրաբերումով անկարտայայտէր, ի նպաստ Հայ Դատին, ուսումնասիրական հաստատութեան, եկեղեցւոյ շինութեան, ինչպէս նաեւ «Արմէնիա» առաջատանաւ ժամանումին Լոս Անճելէս՝ 2009ին, գրող Զօրի Բալայեանի գլխավորութեամբ:

Դուն երջանկութեան գագաթնակէտն էիր մեր կեանքին: Անհուն սիրով կը պարուրէիր մեր սիրտերը՝ երջանիկ զգացողութեամբ, որպէսզի չզգայինք մեր մօր վաղահաս կորուստը, որ մեծ ցաւ էր մեզի համար: Բայց աւելի դժուար եղաւ, երբ մեր հայրը երկրորդ ամուսնութեամբ լքեց իր ընտանիքը, հեռացաւ գաւազներէն եւ գրացաւ իր ծնողական պարտականութիւնը կատարել հանդէպ գաւազներուն: Այլապէս, իր ներկայութիւնը՝ իբրեւ ծնողք, հաւատքի եւ վստահութեան ներշնչում պիտի պարգեւէր իր գաւազներուն եւ խորացնէր սէրը հայրական:

Մեր եղբայրը իր կեանքի վերջին ամիսները անցուց հիւանդանոցի մէջ, իսկ մենք, իբրեւ կենդանի վկայախօսներ ակնատեսը եղանք այնպիսի պարագաներու, որոնք միայն յուսախաբութիւն եւ ներքին խոր ցաւ կը պատճառէին մեզի՝ քոյրերուս: Կը զգայինք մեր եղբոր հոգիի խռովքը, որ կը տառապի ծարաւէ եւ անօթութեան: Այդ ցաւը լուռ կ'ապրէինք նաեւ մենք: Մեր ներքին յուզումը զսպելով եւ ապրումներուն տիրապետելով՝ մենք մեր հայեացքը կ'ուղղէինք իր աչքերուն, ուր աղիողորմ արցունքները կ'արտայայտէին իր հոգեկան տառապանքի անհափելիութիւնը, իսկ իր թախծալի աղաղակները բողբօքէին անգութ բժիշկներուն անտարբեր հոգածութեան դէմ: Անոնք իրենց վստահութեամբ պարտականութիւնները չկատարեցին ըստ խղճի ձայնին եւ իրենց խոստումներուն հարազատ չմնացին: Այլ օրերով զրկելով հիւանդը սնունդէ եւ ջուրէ՝ հիւժեցին ֆիզիքապէս տկարացած մարմինը, իսկ արհեստական խողովակով սնուցումը շնչահեղձութեան մատնեց հիւանդը: Գրեթէ եօթը օր, ատամքսէն ներս ներարկուած սնունդը փոխանակ աղիքները իջնելու՝ հակառակ ուղղութեամբ բարձրացաւ դէպի թոքերը: Այդ ընթացքին, երբ հարցուցի բուժ-անձնակազմի վերակացուին, թէ ո՞ր է գործողութիւնը ընող բժիշկը, որ խոստացած էր գալ, ան հետեւաւ պատասխանը տուաւ. «Your brother's place is in morgue»... Նման արտայայտութիւն մը կը վկայէ միայն անտարբերութիւն: Անոնք ձգեցին, որ հիւանդը տառապելով՝ հոգին աւանդէ Ապրիլ 24ին:

Չօրս մահը կրկին մշտամորմոք ցաւ պատճառեց մեր սրտերուն, քանի որ ատիկա դաւադրական մահ էր՝ կազմակերպուած իր կնոջ եւ մեր եղբոր նախկին գործաւորին կողմէ, իւրացնելու համար հօրս խնայած տարիներու գումարը: Իրերայաջորդ մեր ծնողներու կորուստները, որոնք մեզի համար յուզումնալից եւ տխուր տարիներ էին, ապրեցանք լուռութեամբ:

Յետադարձ ակնարկով մը եւ մեծ երախտագիտութեամբ կը ներկայացնենք մեր աննման եղբոր կեանքը, թէ ինչպիսի՛ խորհուրդներով էր առաջնորդուած, թէ այս պահուն կը լուսաւորուի մեր էութեան մէջ գոհողութեան եւ աշխատասիրութեան այն գիտակցութիւնը, եւ թէ ինքզինք կը դրսեւորէր ծանր աշխատանքով եւ կ'ապահովէր մեր ընտանիքին բարեկեցութիւնը:

Ան իւրայատուկ սէր եւ յարգանք կը տածէր ոչ միայն իր անմիջական ընտանիքին հանդէպ, այլեւ կը ցուցաբերէր անխտիր հոգածութիւն՝ հարազատներուն, բարեկամներուն եւ ընկերներուն հանդէպ, որոնք բոլորը գինք պարծանքով կը նկարագրէին: Այս պահուն, երբ կը վերապրինք անցեալի այս գողտրիկ յուշերը, իր ներկայութիւնը կը ներշնչէ բոլորս: Անկեղծ ու ուղղամիտ նկարագիրը անքակտելիօրէն շողկապուած էին մեր աննման եղբոր՝ Յակոբի՛ մարդասէր, բարեացակամ եւ ճշմարիտ հայրենասէրի օրինակելի կեանքին ու գործունէութեան հետ:

Հայրենի Գիւմրի քաղաքին մէջ ապրած մեր տարիներու ընթացքին, մեր եղբայրը նոյնպէս համատարած ճանաչում ունեցաւ: Ան իր արհեստին մէջ, իբրեւ ինքնաշարժներու հմուտ մասնագէտ, օժտուած էր բացառիկ տաղանդով: Կարճ ժամանակի ընթացքին արժանացաւ մեծ համբաւի: Բոլորը գինք կ'անուանէին անփոխարինելի «ոսկեայ ձեռքերով» վարպետ: Ան շահած էր անվերապահ վստահութիւնն ու համակրանքը իր յաճախորդներուն, շնորհիւ իր պարտաճանաչութեան, բժախնդրութեան եւ ճշգրտագիտութեան:

Տէ՛ր իմ Աստուած, հրաշագործէ՛, որպէսզի բանանք մեր հոգոյն աչքերը եւ ըմբռնենք Քու ներկայութիւնը. եւս մէկ նահատակ՝ ոչ թէ թուրքին կողմէ, այլ՝ բժիշկներուն: Աննման մեր եղբոր կեանքին աւարտը ցնցող էր եւ կը վկայէ դուն ճշմարտութեան մասին: Լոկ բառերով չենք կրնար արտայայտել մեր գայրոյթն ու վրդովմունքը, մեր իւրովի սրտածմլիկ ապրումները: Միայն կրնանք հաստատօրէն ըսել, թէ մեր փորձառութեան մեկնած՝ պատասխանատու բժիշկները վարժ են

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կիրակի, 29 Ապրիլ 2018ին:

- Սգակիրներ՝
 Այրի Տիկին Ժողէֆին Գուգուեան
 Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարգրիտ Գուգուեան եւ զաւակները
 Այրի Տիկին Ժիւլիէթ Աւագեան եւ զաւակները
 Տէր եւ Տիկ. Նազարէթ եւ Մարինա Գուգուեան եւ զաւակները
 Տէր եւ Տիկ. Մովսէս եւ Տալիտա Խաչատուրեան եւ զաւակները
 Տէր եւ Տիկ. Ժորճ Գուգուեան եւ զաւակները
 Տէր եւ Տիկ. Սարգիս Գուգուեան եւ զաւակները
 Այրի Տիկ. Լիտիա Տէօքմէճեան եւ զաւակները
 Տէր եւ Տիկ. Սիմոն եւ Լենա Սարգիս եւ զաւակները
 Տէր եւ Տիկ. Յովսէփ Գուգուեան
 Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան եւ զաւակները
 Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Գարոլին Սամուէլեան եւ դուստրը
 Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Թալին Լապայեան
 Տէր եւ Տիկ. Եագուպ եւ Միլլի Գուգուեան
 Տէր եւ Տիկ. Միսաք եւ Թամար Հեքիմեան
 Հոգեճաշ պիտի մատուցուի Raffi's Catering and Banquet սրահին մէջ, 3887 E Sierra Madre Blvd, Pasadena, CA 91107:

ՅԱԲԱՑԱԿԱՆ

Յակոբ Դինեճեան-ի Մահուան առաջին տարելիցին հոգեհանգստեան առիթով, Տէր եւ Տիկ. Ժորճ Գուգուեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի քոյրերուն՝ Անահիտ (Աննա), Ազնիւ եւ Զապէլի. Առ այդ 100 տուար կը նուիրեն «Մասիս» Շաբաթաթերթին:

Փակելու իրենց գործած սխալը, դժխեմ հաշիւները, եւ թաքցնելու հիւանդին իրաւունքը, որպէսզի խաւարով պատեն իրենց գործած անիրաւութիւնները:
 Այսօր, խոր գիտակցութեամբ եւ երախտագէտ սրտով կը խոնարհինք յիշատակիդ առջեւ, սիրելի՛ եղբայր:
 Քեզ միշտ յիշող քոյրերդ՝ ԱԶՆԻԻ, ԱՆԱՀԻՏ-ԱՆՆԱ ԵՒ ԶԱՊԷԼ ՓԻՆԵՃԱՆՆԵՐ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:-----

Address:-----

City:----- State:----- Zip Code:-----

Country:-----

Tel:----- Email:-----

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Ախոյեանների Լիգա. «Լիւերպոլ» - «Ռոմա»՝ 5:2



Ֆուտպոլի եւրոպական Ախոյեանների լիգայի կիսաեզրափակիչի առաջին հանդիպումն անցկացրին անգլիական «Լիւերպոլը» ու իտալական «Ռոման»։ Անգլիացու տեղի ունեցած դիմակայութիւնում 5:2 հաշուով առաւելութեան հասան դաշտի տէրերը։

Արդէն 18-րդ րոպէին անգլիացի կիսապաշտպան Ալեքս Օքսլեյդ-Չեմբերլենի վնասուածքից յետոյ «Լիւերպոլը» գերմանացի գլխաւոր մարզիչ Նոքրթընը կոչուր ստիպուած էր դիմել փոփոխութեան՝ խաղադաշտ դուրս բերելով հոլանտացի կիսապաշտպան Ժորժինիօ Վեյնալդումին։

35-րդ րոպէին «Լիւերպոլը» կարողացաւ բացել հանդիպման հաշիւը։ Պրագիլացի յարձակուող Ռոբերտո Ֆիրմինոյի փոխանցումից յետոյ նախկին թիմի դարպասը գրաւեց եգիպտացի յարձակուող Մոհամեդ Սալահը, որը 45-րդ րոպէին նաեւ կրկնապատկեց հաշիւը։

Ընդիշումից յետոյ անգլիական թիմը եւս երեք կոլ խփեց։ Դուբլ ձեւակերպեց նաեւ Ֆիրմինոն, մէկ կոլ էլ խփեց սենեգալցի յարձակուող Սադիո Մանեն։ Սալահը կատարեց նաեւ երկու կոլային փոխանցում։

Վերջնամասում պոստիացի յարձակուող էդին Զեկոյի կոլի եւ արժենթինացի կիսապաշտպան Դիեգո Պերոտիի դիպուկ իրացրած 11 մեթրանոցի շնորհիւ իտալացի էուսեբիօ Դի Ֆրանչեսկոյի գլխաւորած թիմը կարողացաւ կրճատել հաշուի տարբերութիւնը՝ 5:2։

«Ռոմա» - «Լիւերպոլ» պատասխան հանդիպումն իտալիացու տեղի կ'ունենայ Մայիսի 2-ին։

Մատրիտի «Ռեալի» Կամային Յաղթանակը «Բաւարիայի» Նկատմամբ

Ֆուտբոլի եւրոպական Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչի առաջին խաղում Մադրիդի «Ռեալը» Միւնխենում կամային յաղթանակ տարաւ Գերմանիայի չեմպիոն «Բաւարիայի» նկատմամբ՝ 2:1։

Հաշիւը բացեցին դաշտի տէրերը։ 28-րդ րոպէին կոլումբացի կիսապաշտպան Խամես Ռոդրիգեսի փոխանցումից յետոյ աչքի ընկաւ գերմանացի կիսապաշտպան Զոռուա Կիմիխը։

44-րդ րոպէին Արքայական թիմի բրազիլացի պաշտպան Մարսելոն վերականգնեց հաւասարութիւնը։ Գոլային փոխանցումը կատարեց իսպանացի պաշտպան Դանիել Կարվախալը։

Առաջին խաղակեսում «Բաւարիայի» գլխաւոր մարզիչ Նոպ Զայնհեյսը ստիպուած էր երկու փոփոխութիւն կատարել ֆուտբոլիստների վնասուածքների պատճառով։

Ընդմիջմանը իսպանացի կիսապաշտպան Իսկոյին փոխարինած իսպանացի կիսապաշտպան Մարկո Ասենսիոն իսպանացի կիսապաշտպան Լուկաս Վասկեսի փոխանցումից յետո առաջ մղեց «Ռեալին»՝ յաղթանակ բերելով ֆրանսիացի Զինեդին Զիդանի գլխաւորած թիմին։

Պատասխան հանդիպումը Մադրիդում տեղի կ'ունենա Մայիսի 1-ին։

Սոհամեդ Սալահը՝ Պրեմիեր Լիգայի Լաւագոյն Ֆուտպոլիստ

«Լիւերպոլը» եգիպտացի յարձակուող Մոհամեդ Սալահը Պրոֆեսիոնալ ֆուտպոլիստների ասոցիացիայի (PFA) վարկածով ճանաչուել է Անգլիայի 2017/18թթ. առաջնութեան լաւագոյն ֆուտպոլիստ։

Մրցանակին հաւակնում էին նաեւ «Մանչեսթեր Եունայթեդի» սպանացի դարպասապահ Դաւիդ դէ Խեան, «Մանչեսթեր Սիթիի» կիսապաշտպաններ Կեւին դէ Բրոյնեն, Լեբոյ Սանեն ու Դաւիդ Սիլվան եւ Լոնտոնի «Տոտենհեմի» անգլիացի յարձակուող Հարի Բեյնը։

Անգլիայի ընթացիկ առաջնութիւնում 25-ամեայ Սալահը 33 խաղում դարձել է 31 կոլի ու 9 կոլային փոխանցման հեղինակ եւ միանձնեայ գլխաւորում է ուժբարկունների ցուցակը։

Տարուայ լաւագոյն երիտասարդ ֆուտպոլիստ է ճանաչուել «Մանչեսթեր Սիթիի» գերմանացի կիսապաշտպան Լեբոյ Սանեն։ Նա առաջ է անցել Հարի Բեյնից («Տոտենհեմ»), Էդերսոնից («Մանչեսթեր Սիթի»), Մարկուս Ռեշֆորդից («Մանչեսթեր Եունայթեդ»), Ռայան Սեննիչոնից («Ֆուլհեմ») եւ Ռահիմ Ստերլինգից («Մանչեսթեր Սիթի»)։

Գոլովկին. Վանես Մարտիրոսեանը Շատ Բարդ Մրցակից է

Պրոֆեսիոնալ բռնցքամարտի միջին քաշային կարգում WBC, WBA Super, IBF եւ IBO վարկածներով աշխարհի ախոյեան, դազախ Գենադի Գոլովկինը եւ ամերիկահայ վանես Մարտիրոսեանն անցկացրել են բաց մարզում։ Մարզումից յետոյ տեղի է ունեցել նրանց առաջին հայեացքների մենամարտը։




36-ամեայ Գոլովկինը նաեւ խօսել է վանես Մարտիրոսեանի մասին. «Նա իրական մրցակից է։ Ես շատ ուրախ եմ, որ վերջապէս ունեմ մրցակից։ Նա շատ բարդ մրցակից է՝ ուժեղ, բարձրահասակ։ Բացի այդ, նրա հետեւում կայ հրաշալի թիմ», - դազախ բռնցքամարտիկի խօսքը մէջբերում է BoxingScene-ը։

Յիշեցնենք, որ Գոլովկինի եւ Մարտիրոսեանի միջեւ մենամարտը

Մոսկուայի «Արարատը» Ապահովեց Առաջին Դիվիզիոնի Ուղեգիրը

Ֆուտպոլի Ռուսաստանի երկրորդ դիվիզիոնի առաջնութեան «Կենտրոն» գոտու մրցաշարի 20-րդ տուրում Մոսկուայի «Արարատը» հիւրընկալուեց Գառնիկ Աւալեանի գլխաւորած «Ռյազանին» եւ առաւելութեան հասաւ 2:0 հաշուով։

«Արարատը» 54 միաւորով առաջատարն է, «Ռյազանը» 38 միաւորով երկրորդ տեղում է։ Առաջնութեան աւարտից 6 տուր առաջ «Արարատը» ապահովեց Առաջին դիվիզիոնի ուղեգիրը՝ տանելով 17 յաղթանակ, չկրելով ոչ մի պարտութիւն, երեք հանդիպում էլ աւարտելով ոչ ոքի։



«Տոտենհեմի» Յարձակուողը՝ Ասիայի Լաւագոյն Ֆուտբոլիստ

«Տոտենհեմի» յարձակուող Սոն Հյոն Մինը ճանաչուել է Ասիայի լաւագոյն ֆուտբոլիստ։

Հարաւկորեացի խաղացողն այդ մրցանակը ստանում է երրորդ անգամ։ Նախկինում նա լաւագոյն է ճանաչուել նաեւ 2015 եւ 2017 թուականներին։

Քուէարկութեան արդիւնքում, Սոնն առաջ է անցել Սինձի Կազաուայից («Բորուսիա Դորտմունդ»), Ճապոնիայի հաւաքականի եւ Արոն Մոյից («Հադերսֆիլդ», Աւստրալիայի հաւաքական)։

Ասիայում առանձին մրցանակ է տրուում նաեւ ասիական ակումբներում հանդէս եկող ֆուտբոլիստների համար։



Աշխարհի Ամենամեծ Եկամուտ Ունեցող Մարզիչները

Աշխարհի ամենաբարձր վարձատրութեամբ ֆուտպոլային մարզիչների դասակարգումը գլխաւորում է անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մոուրինիոն, հաղորդում է France Football-ը։ Պորտուգալացի մասնագէտի տարեկան եկամուտը 26 միլիոն եւրօ է։ Երկրորդ տեղում է Չինաստանի հաւաքականի իտալացի գլխաւոր մարզիչ Մարչելո Լիպին՝ 23 միլիոն եւրօ։

Մադրիդի «Աթլետիկոյի» արժենթինացի գլխաւոր մարզիչ Դիեգո Սիմէոնեն ստանում է տարեկան 22 միլիոն եւրօ, Մադրիդի «Ռեալի» ֆրանսացի գլխաւոր մարզիչ Զինեդին Զիդանը՝ 21 միլիոն, անգլիական «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխաւոր մարզիչ Խոսեպ Գուարդիօլան՝ 20 միլիոն եւրօ։

Հաշուարկուած են աշխատավարձերը, բոնուսները եւ գովազդից ստացուող եկամուտը։

Logo for SYRIAN ARMENIAN RELIEF FUND with text 'Save Support Sustain' and website 'www.syrianarmenianreliefund.org'.